Ազգ
Azg

22 ՅՈՒՆԻՍ 2013 ՇԱԲԱԹ 105(5188)

ISSN: 1829-1651

# Ո՞ր սցենարն էր



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իշխանության մեջ ինչ-որ բան է կատարվում: Սա թեեւ ընդհանուր առմամբ նկատելի էր բավական տեւական ժամանակ, բայց վերջերս ավելի սրվեց: Կարծես իշխանության տարբեր թեւերին թույլ են տվել իրար խժռել՝ տեսնելու համար, թե ո՞վ ում հախից կգա: Եվ սա բավական տեսանելի էր Ազգային ժողովում Վերահսկիչ պալատի հաշվետվության ժամանակ: Ու բոլորովին էլ այն չէ, որ ժողովրդավարություն է, մեծամասնությունը նկատում է իրեն իր թերությունները եւ այլն:

Տես էջ 3

# Հարավային «գազային միջանցքի» երթուղին չհայտարարվեց

Ադրբեջանական մամուլն անոնսավորել էր, որ «հունիսի երրորդ տասնօրյակում նախագահ Իլհամ Ալիեւը կայցելի Բրյուսել, որտեղ, հավանաբար, հանդիսավոր պայմաններում կհայտարարվի հարավային գազային երթուղու վերջնական երթուղու ընտրության մասին»:

Երեկ Իլհամ Ալիեւն արդեն Բրյուսելում էր: Բանակցությունների ավարտին, սակայն, ոչ մի հանդիսավոր պայմաններ չստեղծվեցին եւ հարավային գազային միջանցքի երթուղու ընտրության կամ նույնիսկ նախանշման մասին ոչինչ չասվեց: Եվրոհանձնաժողովի նախագահի եւ Իլհամ Ալիեւի համատեղ մամուլի ասուլիսին, ընդհակառակը, ուշադրության կենտրոնում էր Ադրբեջանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարական բարեփոխումների հարցը:

Իր խոսքում Եվրոհանձնաժողովի նախագահը բավական աններբանկատ է գտնվել եւ ասել, որ Ադրբեջանը ժամանակին եղել է ամբողջատիրական ԽՍՀՄ կազմում, եթե իրավիճակը գնահատվի այդ իրողության նկատառմամբ, ապա «կարելի է տեսնել առաջընթաց»: Սա նշանակում է, որ Եվրամիությունն ադրբեջանական «ժողովրդավարությունը» պարզապես համեմատում է խորհրդային ամբողջատիրության հետ:

Ու թեեւ Եվրոհանձնաժողովի նախագահը նաեւ ասել է, որ «Եվրոպան էլ կատարյալ չէ, եւ ամեն երկիր ունի իր խնդիրները», այդուհանդերձ Իլհամ Ալիեւն ակնհայտորեն նյարդայնացած էր: Այնքան, որ լրագրողներից մեկի հարցին պատասխանել է, որ «Ադրբեջանում քաղաքական հայացքների համար ոչ ոք չի հետապնդվում»՝ կատարելապես նմանվելով խորհրդային չինովնիկի:

Իլհամ Ալիեւի բրյուսելյան այցին ընդառաջ Եվրախորհրդարանը հատուկ բանաձեւ էր ընդունել եւ դատապարտել Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարման փաստերը:

Տես էջ 8



# ՄԱԿ. Մանուկների թերասնումը անդրադառնում է երկրի տնտեսության վրա



ՄԱԿ-ի եւ Աֆրիկյան միության փորձագետների հետազոտությունների համաձայն, վաղ հասակի երեխաների թերասնումը հետագայում անդրադառնում է տվյալ երկրի տնտեսության վրա: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Ինչպես նշում են փորձագետները, մանուկներին բնականոն սննդով չապահովող երկրների ղեկավարները պետք է հասկանան, որ դա ոչ միայն բարոյականության հարց է, այլեւ՝ երկրի ապագա տնտեսական դժվարությունների: Օրինակ՝ մանկության տարիներին թերասնվողները չափահաս տարիքում ավելի շատ են ենթակա դառնում հիվանդությունների, իսկ դրանց բուժումը պահանջում է լրացուցիչ միջոցներ:

Բացի դրանից՝ նման մարդիկ ֆիզիկապես լինում են ավելի թույլ եւ աշխատում են անհամեմատ քիչ:

ՄԱԿ-ի եւ Աֆրիկյան միության փորձագետները մասնավորապես նշում են, որ, օրինակ, Ուգանդայում, նման խնդիրների պատճառով կորչում է ազգային եկամտի մոտ 6 տոկոսը:

# 4 զինվորի սպանած դասապարտյալն ինքնասպանություն է գործել

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ցմահ դատապարտյալ Մանվել Հազրոյանը պատժախցում ծածկոցի բարակ կտրած շերտակտորով կախվելով ինքնասպանություն է գործել: Հազրոյանը պատժախուց էր տեղափոխվել հունիսի 11-ին՝ աշխատակիցների օրինական պահանջները չկատարելու համար, եւ նրա նկատմամբ կիրառվել էր կարգապահական տասնօրյա տույժ: Հազրոյանը ցմահ ազատազրկման էր դատապարտվել նոյեմբերի 19-ին ԼՂՀ ՊԲ հարավային զորամասում տեղի ունեցած արյունալի միջադեպի համար, որի հետեւանքով հրազենային կրակահերթից զոհվել էին ժամկետային զինծառայողներ Լեւոն Եսայանը, Ներսես Գալոյանը, Նարեկ Սահակյանն ու Նվեր Սարգսյանը: Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ էին ստացել ժամկետային զինծառայողներ Սարգիս Մելքումյանը, Խաչիկ Ալեքսանյանը, Մասիս Գրիգորյանն ու Մանվել Հազրոյանը:

22-ամյա ցմահ դատապարտյալի ինքնասպանության վերաբերյալ երեկ հաղորդագրություն է տարածել մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը՝ նշելով, որ կատարվածը հերթականորեն ապացուցեց, որ քրեակատարողական հիմնարկներում բացակայում է սոցիալ-հոգեբանական պատշաճ ծառայությունը. նախատեսված է 1 հոգեբան 100-ից ավելի ցմահ դատապարտյալի համար, բացակայում են վերականգնողական ծրագրերը, չկան մշակութային, սպորտային միջոցառումներ, պատիժը կրելու ընթացքում չեն ստեղծվում աշխատելու, կրթություն ստանալու հնարավորություններ, բացակայում է գործերի վերանայման արդյունավետ մեխանիզմ, բացակայում է ցմահ ազատազրկման նշանակման, կիրառման, ռեժիմների փոփոխության եւ վաղաժամկետ ազատ արձակման ճկուն եւ տարբերակված համակարգ: Աշնանը այս եւ քրեակատարողական հիմնարկներում այլ խնդիրների վերաբերյալ օմբուդսմենը հանդես կգա հրապարակային զեկույցով:

Հ. Հ.

# Ջուրը Երեւանում էժանացավ մոտ 4 դրամով

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը երեկ տեղի ունեցած նիստում Երեւանում խմելու ջրի սակագին է հաստատել 170,256 դրամ 1 խմ դիմաց: Ներկայումս գործող սակագնով «Երեւան ջուր» ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագինը կազմում 174,059 դրամ: Նոր՝ մոտ 4 դրամով էժան սակագները ուժի մեջ կմտնեն 2013-ի հուլիսի 21-ից:

Ներկայացնելով «Երեւան ջրի» սակագների ճշգրտման հայտը՝ հանձնաժողովի ներկայացուցիչը նշեց, որ մատակարարվող խմելու ջրի սակագինը կազմում է 144 դրամ, ջրահեռացմանը՝ մոտ 12 դրամ, կեղտաջրերի մաքրմանը՝ ավելի քան 12 դրամ: Տեղեկացվեց, որ խմելու ջրի սակագների վրա ազդում են 4 գործոններ՝ ջրի սպառման ծավալներ, գնաճ, էլեկտրաէներգիայի սակագին եւ փոխարժեք: Ընդ որում, փետրվարին ներկայացրած հայտով, «Երեւան ջուրը» 1 խմ խմելու ջրի սակագինը առաջարկել էր 166 դրամ, սակայն, նկատի ունենալով հուլիսից էլեկտրաէներգիայի սակագնի 8 դրամով թանկացումը, նոր սակագին է առաջարկվել 170 դրամը:

Ա. Մ.

# Արդեն արտահանվել է 4500 տոննա ծիրան

## *Գյուղնախարարը այցելեց «Սպայկա» ընկերության նոր արտադրամաս*



ՖՈՏՈԼՈՒՐ

Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը երեկ այցելեց Հայաստանի ամենախոշոր մթերող ընկերության՝ «Սպայկայի» նոր արտադրամաս: Ընկերությունում հավաստիացրին, որ 1000 տոննա տարողությամբ նոր սառնարանային տնտեսության հզորությունը կեռապատկվի:

«Սպայկայի» տնօրենությունը Սերգո Կարապետյանին ներկայացրեց նոր մասնաշենքի հնարավորությունները, ցուցադրեց մթերված ծիրանի վերջին խմբաքանակը: Տեղեկացվեց, որ ծիրանի մթերման գինը 400-500 դրամ է, իսկ վճարումը կատարվում է տեղում՝ կանխիկ:

Լրագրողների հետ զրույցի ժամանակ **Սերգո Կարապետյանը** հայտնեց, որ Հայաստանից արդեն արտահանվել է շուրջ 6700 տոննա կարտոֆիլ, որից 3750 տոննան իրացրել է «Սպայկան», ինչպես նաեւ շուրջ 4500 տոննա ծիրան, որից ավելի քան 850 տոննան՝ «Սպայկայի» կողմից:

# Ա. Աշոտյան. «Այս տարի արձանագրվել են մեծ քանակությամբ բարձր գնահատականներ, մասնավորապես հումանիտար առարկաներից»

Երեկ տեղի ունեցավ «Հայոց պատմություն» առարկայի միասնական քննությունը, եւ Երեւանի թիվ 170 ավագ դպրոցում տեղակայված քննական կենտրոն այցելեց կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

«Անցյալ տարի արձանագրված քննությունների հանդարտ ընթացքը մենք ամրապնդեցինք նաեւ այս տարի. եթե տարիներ առաջ հանրությունն ապրում էր ընդունելության քննություններով, ապա այսօր ծնողները համեմատաբար հանգիստ են: Թե՛ կազմակերպչական եւ թե՛ բովանդակային խնդիրներով լուրջ դժգոհություն չկա, որն էլ իր հերթին վկայում է մեր աշխատանքի դրական արդյունքի մասին: Քննությունների հաջողությունը պայմանավորված է գործընթացի նկատմամբ հանրության դրական ընկալումներով, բացասական լրահոսի շատ չնչին տոկոսով, ինչպես նաեւ դիմորդների ցուցաբերած բարձր առաջադիմությամբ», երեկ ասաց **Արմեն Աշոտյանը**:



Աշոտյանը նշում է, որ այս տարի արձանագրվել են մեծ քանակությամբ բարձր գնահատականներ, մասնավորապես հումանիտար առարկաներից, որն էլ նախարարին հիմք է տալիս ենթադրելու, որ շատ մասնագիտությունների գծով մրցույթը թեժ է լինելու, եւ անցողիկ միավորների շեմը կբարձրանա:

ԿԳ նախարարն ասաց, որ հաջորդ տարի ԳԹԿ-ի հետ կանցկացվեն նախապատրաստական աշխատանքներ՝ շտեմարանների բազան ավելացնելու եւ նրանցում որոշակի կառուցվածքային փոփոխություններ անելու կապակցությամբ: Միասնական քննությունների արդյունքներն ըստ կարգի կամփոփվեն հուլիսի 15-ին, որպեսզի տարկետման իր գործառույթը հասցնի իրականացնել նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Արմեն Աշոտյանը հիշեցրեց, որ այն դիմորդները, որոնք ստացել են դրական գնահատականներ, սակայն առաջին հայտով չեն ընդունվել, հնարավորություն կունենան լրացուցիչ հայտով դիմելու եւ ստացած քննություններով ընդունվելու բացառապես թափուր տեղեր մնացած մասնագիտությունների գծով:

Քննության արդյունքները կիրապարակվեն 5 օր անց, իսկ քննական թեստի ճիշտ պատասխանները՝ քննության օրը, ԳԹԿ եւ ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքերում:

Ս. Հ.

# Առավելագույն արագության տուգանքները մնում են նույնը



Սահմանված առավելագույն արագության տուգանքների չափերի փոփոխության վերաբերյալ ԱԺ-ում ընդունված օրենքի նախագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տուգանքները մնում են նույնը: Այս մասին երեկ մամուլի ասուլիսի ժամանակ նշել է «Աքիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը**:

Ըստ News.am-ի՝ Էդուարդ Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ մինչեւ 70 կմ/ժամ արագության դեպքում վարորդը չի տուգանվի, իսկ 71 կմ/ժամից սկսած արդեն կտուգանվի. «Եթե նախկինում այդ մեկ կիլոմետրը վիճարկվում էր, հիմա չի վիճարկվում»: Սակայն Էդուարդ Հովհաննիսյանը դժգոհել է, որ հիմա վարորդը վայրկյանը մեկ պետք է նայի արագաչափին:

Վարորդները նաեւ դժգոհում են, որ «Մոսկվիչկա» սուպերմարկետից ամեն անգամ սիգարետ գնելիս 5 հազար դրամով տուգանվում են: Էդուարդ Հովհաննիսյանի բացատրությամբ՝պատճառը ճանապարհային երթեւեկության կանոնների փոփոխությունն է, ըստ որի խաչմերուկներում կանգառն արգելված է. «Դա խաչմերուկ է համարվում, եւ այդպիսի բազմաթիվ խաչմերուկներ ունենք: Օրինակ՝ «Հայրենիք» կինոթատրոնի հրապարակը, Սախարովի հրապարակը, Թբիլիսյան պողոտա-Բաբայան փողոց խաչմերուկը: Հիմա մենք ասում ենք՝ ո՞ւմ են խանգարում, որ Սախարովի հրապարակի մեռած անկյուններում կանգնեն»:

Ըստ բանախոսի՝ ճանապարհային իրավախախտումների դեպքերի 70 տոկոսը շահում են, իսկ 30-ը՝ պարտվում:

Ի. Պ.

# Նամակ-արձագանք

«Ազգ» օրաթերթի հունիսի 7-ի համարում տպագրված «Օրինագծեր, որոնք դեմ են հայկական ընտանիքին» հոդվածին ուղղված ստացել ենք նամակ-արձագանք «Արեգ» գիտավերլուծական կենտրոնից:

Նամակում ասվում է, որ կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների մասին օրինագծի առնչությամբ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դոցենտ Վարդան Խաչատրյանն ահազանգել է օրինագծի 3-րդ հոդվածում «գենդեր» եզրույթի նորօրյա սահմանման մասին, ըստ որի, գենդերը մասնավորապես «ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարքն է»:

Այսպիսով, հիմնավորվում է մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից «Խտրականության դեմ» նախագծում կենսաբանական սեռի տարանջատումը գենդերից՝ որպես սոցիալական սեռի:

Ավելին՝ կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին երրորդ ընթերցումն անցած օրինագծի 8-րդ հոդվածում պարտավորություն է ստանձնվում «գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի» կատարման եւ «գենդերային հավասարության ապահովման համար նորմատիվ իրավական բազայի» ձեւավորման, կատարելագործման, զարգացման եւ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխանեցման մասին:

«Մեր խորին մտահոգությունը կապված է ավանդական-հոգեւոր արժեհամակարգին անհարիր, անհատի կենսաբանական սեռից տարբեր «գենդերային ինքնության» ձեռքբերովի վարքի «սոցիալապես ամրագրմանը»: Իսկ դա, ինչպես Արեւմուտքում, ճանապարհ է բացում նույնասեռ մի քանի անձանց «ընտանիք» կազմելու, նրանցում երեխաների՝ բարոյական կործանմանը տանող «որդեգրման»... եւ մարդկային տեսակի բնաջնջման համար», ասվում է նամակում:

## Ճշտում

**«Ազգի» հունիսի 12-ի համարում տպագրված «Սպիտակի մի բնակչի պատմություն» վերնագրով հոդվածում թյուրիմացաբար սխալ է տպագրվել այն մասում, որտեղ ասվում է, թե Սերյոժա Պողոսյանը հարկը չի վճարել: Իրականում Սերյոժա Պողոսյանը 2004-2013 թվականներին տարեկան մուծել է 1250 դրամ հողահարկ եւ ունի բոլոր անդորրագրերը:**

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Էդիկ Արտեմի Զոհրաբյան



**Հայ պատմագիտական միտքը ծանր կորուստ կրեց: 2013 թ.-ի հունիսի 21-ին 74 տարին նոր բոլորած՝ անսպասելիորեն կյանքից հեռացավ ականավոր պատմաբան, միջազգային հարաբերությունների մասնագետ, Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մովսես Խորենացու անվան մեդալակիր Էդիկ Արտեմի Զոհրաբյանը:**

**Էդիկ Զոհրաբյանը ծնվել է 1939 թ.-ի մայիսի 5-ին ՀՀ Կապանի շրջանի Բաղաբերդ գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1956 թ. ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը եւ ընդունվել Երեւանի լեռնամետալուրգիական տեխնիկում, որն ավարտելուց հետո (1959 թ.) զորակոչվել է խորհրդային բանակ: Ավարտելով ծառայությունը՝ 1962 թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Ուսումնառության ընթացքում որպես ուսման գերազանցիկ ստացել է ակադեմիկոս Հ. Մանանդյանի անվան կրթաթոշակ: 1967 թ. գերազանցությամբ ավարտելով պատմության ֆակուլտետը՝ ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1968 թ. փոխադրվել է դասախոսական աշխատանքի՝ զբաղեցնելով սկզբում ասիստենտի, 1974 թ-ից դոցենտի, 1988-ից պրոֆեսորի պաշտոն: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1973-ին, դոկտորականը՝ 1987-ին:**

**1993 թ. ընտրվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության նորաբաց ամբիոնի վարիչ, իսկ 1998-ին ստանձնել Միջազգային հարաբերությունների՝ դարձյալ նորաբաց ֆակուլտետի դեկանի պաշտոնը եւ ղեկավարել այն մինչեւ 2008-ը: Նույն թվականի հունիսին նորից ընտրվել է միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության ամբիոնի վարիչ:**

**Պրոֆեսոր Է. Ա. Զոհրաբյանը հայ դիվանագիտության պատմության ճանաչված մասնագետ էր եւ ունի ակնառու հաջողություններ հայոց պատմության նորագույն շրջանի, հատկապես 1918-1922 թթ. ամենաբարդ ու խճճված հիմնահարցերի գիտական մշակման եւ լուսաբանության գործում, ինչին նվիրված են նրա թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունները, ավելի քան 60 գիտական հոդվածները եւ բոլոր մենագրությունները: Չգնալով տրորված ճանապարհով եւ սկզբից եւեթ ուշադրությունը բեւեռելով մեր պատմագիտության կողմից շրջանցված (խորհրդային ժամանակաշրջանի բնորոշ զգուշավորության հետեւանքով) հիմնահարցերի վրա՝ նա ստեղծել է մնայուն եւ հիմնարար աշխատություններ:**

**1979 ին լույս տեսած նրա «Սովետական Ռուսաստանը եւ հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ.» առաջին մեծածավալ աշխատությունը նվիրված է ոչ միայն խորհրդային, այլեւ նախորդ շրջանի հայ-թուրքական հարաբերությունների լուսաբանմանը: Հայ-իրանական հարաբերությունների հետազոտմանն է նվիրված Է. Զոհրաբյանի «Սովետական Ռուսաստանը եւ հայ-իրանական հարաբերությունները 1920-1922 թթ.» երկրորդ մեծածավալ աշխատությունը (1985 թ.): Հայոց պատմության 1918-22 թվականների ժամանակահատվածի տարաբնույթ ու բազմաբարդ խնդիրների լուսաբանմանն են նվիրված նաեւ նրա «Եվրոպական երկրների հետ Սովետական Հայաստանի առեւտրատնտեսական առնչությունների պատմությունից (1920-1922 թթ)» (1987 թ.), «1920 թ. թուրք-հայկական պատերազմը եւ տերությունները» (1997 թ.), «Ազգամիջյան կռիվները Երեւանի նահանգում 1918 թ.» (2000 թ.), «Նախիջեւանյան հիմնահարցը եւ Հայաստանի «դաշնակիցները» (2002 թ.) ծավալուն մենագրությունները: Վերջերս լույս տեսած նրա «Шарур-Нахиджеван в 1918-19гг.. (История геноцида нахиджеванских армян)» մենագրությունը (2012 թ.), ցավոք, դարձավ ականավոր գիտնականի կարապի երգը:**

**Անուրանալի է Էդիկ Զոհրաբյանի ավանդը համալսարանական կրթության կազմակերպման ու զարգացման գործում: Հիմնադրելով ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը՝ նա նաեւ հիմնադիրը եղավ հայ միջազգայնագիտական նոր դպրոցի: Էդիկ Զոհրաբյանի պատրաստած կադրերն այսօր հաջողությամբ են գործում ինչպես կրթության ու գիտության ոլորտում, այնպես էլ միջազգային հարաբերությունների, դիվանագիտության պրակտիկ ասպարեզում: Նա սիրված ու հարգված ընկեր, գործընկեր ու դասախոս էր:**

**Երեւանի պետական համալսարանի ռեկտորատը խորին ցավակցություններ է հայտնում Էդիկ Զոհրաբյանի ընտանիքին ու հարազատներին, գործընկերներին եւ առհասարակ հայ ողջ գիտական հանրությանը: Էդիկ Զոհրաբյանն ընդմիշտ կմնա իր բոլոր հարազատների, ընկերների, դասախոսների եւ ուսանողների սրտերում:**

**Ականավոր գիտնականի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա այսօր, հունիսի 22-ին, ժամը՝ 18-ից, Ալեք Մանուկյան 8 հասցեում, հուղարկավորությունը՝ հունիսի 23-ին՝ ժամը 14-ին, նույն հասցեից:**

**ԵՊՀ ռեկտորատ**
**ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Տարեկան 1000 մասնագետի պահանջարկ 10-15 տոկոս աճ ունեցող ոլորտի համար

## *Երեւանում բացվեց տեղեկատվական տեխնոլոգիաների «Դիջիթեք» բիզնես ֆորումը*

Երեւանում երեկ բացված «Խելացի լուծումներ՝ խելացի երկրների համար» խորագրով «Դիջիթեք» բիզնես ֆորումին մասնակցում էին 62 կազմակերպություններ, 43-ը տեղական, մյուսները՝ ամերիկյան, ռուսական, սինգապուրյան, վրացական, իտալական, ուկրաինական եւ այլ ընկերություններ: Ֆորումի բացմանը ելույթ ունեցավ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**:



Վարչապետը ակնառու համարեց այս ոլորտում մասնավոր հատվածի հետ կատարված աշխատանքների արդյունքները, արձանագրելով տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում ահռելի առաջընթացը, որը «առաջընթաց է նաեւ միջազգային համեմատությունների մեջ»: Ըստ Տիգրան Սարգսյանի, դրա վառ վկայությունն է նաեւ այն հանգամանքը, որ համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունները հենց Հայաստանի Հանրապետությունում են տեղակայում իրենց տարածաշրջանային կենտրոնները: Վարչապետի կարծիքով, դրան մեծապես նպաստում են նաեւ ԱՄՆ-ում՝ Սիլիկոնյան հովտում անցկացվող ֆորումները, մեր երկրին հնարավորություն տալով ուղղակի կապ հաստատելու աշխարհի առաջատար ընկերությունների հետ:



Տիգրան Սարգսյանի խոսքերով, տարեկան 10-15 տոկոս աճ ապահովող ՏՏ ոլորտը կառավարության առջեւ դնում է կադրերի պատրաստման խնդիր, որպեսզի բուհերը կարողանան տարեկան առնվազն 1000 մասնագետ մատակարարել այս ոլորտին, ինչը կառավարության առաջնահերթություններից մեկն է: Այնուհետեւ վարչապետը հիշատակեց ձեռնարկությունների պետական ռեգիստրում եւ կադաստրի համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը եւ դրանց արդյունավետությունը, տեղեկացրեց, որ ՏՏ-ի լայնածավալ կիրառում է սկսվել հարկային եւ մաքսային բնագավառում՝ կրճատելով հարկ վճարողների շփումը այս ոլորտի աշխատողների հետ՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, ապա նաեւ համակարգը դարձնելով թափանցիկ եւ վերահսկելի:

«Բարձր արտադրողականության, բազմաֆունկցիոնալ շուրջ 7500 ՀԴՄ-ներ, որոնք ունեն հսկողական բարձր հնարավորություններ, թույլ են տալիս ոչ միայն իրականացնել հաշվառում, ստանալ հաշվետվություններ, այլեւ քարտային վճարումներ, հուլիսի 1-ից առաջին հերթին կտրամադրվեն խոշոր բիզնեսին», այս մասին իր ելույթում հայտնեց Տիգրան Սարգսյանը, ավելացնելով, որ 2014-ի հունվարի մեկից 60 հազար փոքր եւ միջին ձեռնարկություններ եւս հնարավորություն կունենան օգտվելու այդ ՀԴՄ-ներից, ինչն էապես կբարելավի վարչարարությունը հարկային եւ մաքսային ոլորտում: Ելույթի վերջում նա հավաստիացրեց, որ ՏՏ ոլորտը կառավարության առաջնահերթություններից մեկն է:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը հիշեցրեց, որ նախորդ տարի ինքը վարչապետ Սարգսյանի հետ ԱՄՆ-ում մասնակցել է «ԱրմԹեք» համաժողովին եւ նշել, որ այդ համաժողովը ամերիկյան եւ հայկական ընկերությունների սերտ համագործակցության լավ օրինակ է: «ԱՄՆ-ի ընկերությունները Հայաստանում բավականին ակտիվ են: Շատ կարեւոր է, որ ՏՏ ընկերությունները եւ տնտեսության մյուս ճյուղերը փոխկապակցվեն: ՏՏ ոլորտը լավ աշխատանք է կատարում, նրա արտադրության 40 տոկոսն իրացվում է երկրի ներսում, ինչը լավ ցուցանիշ է նաեւ էլեկտրոնային կառավարման առումով», ասաց դեսպանը:

Ա. Ս.

# Հայաստանի բնակչության 37%-ը գիրք չի կարդում

Ընթերցանության ճգնաժամի մակարդակը գնահատելու եւ իրավիճակն ուսումնասիրելու նպատակով «Սենսեյ» մարկետինգ ակադեմիան հետազոտություն է անցկացրել՝ պարզելու ընթերցանության ոլորտի հիմնախնդիրները:



Համաձայն ուսումնասիրությունների արդյունքների՝ Հայաստանի բնակչության 37%-ն ընդհանրապես գիրք չի կարդում, իսկ հարցվածների 44%-ը պատասխանել է, որ վերջին 5 տարում սկսել է ավելի քիչ կարդալ: Պարզվել է, որ ավելի քիչ կարդացող խմբի 70%-ն ամուսնացածներն են: «Ինչն է խանգարում ձեզ գիրք կարդալ» հարցին հարցվածների մեծամասնությունը պատասխանել է՝ ժամանակ չկա: Ընթերցանության հիմնական տարիքը միջին դպրոցականն է՝ 10-16 տարեկան: Վերջին 5 տարիների ընթացքում ավելի շատ է սկսել կարդալ բնակչության 14%-ը: Նրանց մեծամասնությունը գիրք կարդում է ելնելով ուսումնական հաստատությունների տված պահանջներից: Հենց դա է պատճառը, որ ընթերցողների մեծամասնությունն ուսանողներն են՝ 64%-ը իգական սեռի ներկայացուցիչներ: Հարցվածներից միայն 6%-ն է գրքերի մասին տեղեկատվություն ձեռք բերում գրախանութներից, իսկ 67%-ը չի հաճախում գրադարաններ: «Հաճույքի համա՞ր եք կարդում» հարցին բնակչության 52,4 %-ը դրական պատասխան է տվել, 43,5%-ը խոստովանել է, որ գիրք կարդում է ինքնակրթության համար, իսկ մնացածը՝ մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու:

Պարզվել է, որ հարցվածների 87%-ը կարդում է դասական արձակ ստեղծագործություն՝ մասնավորապես հայերենով: Երկրորդ ամենաշատ ընթերցվող լեզուն ռուսերենն է: Թեպետ վերջին շրջանում ավելացել են էլեկտրոնային գրքեր ընթերցողները, այնուամենայնիվ 78%-ը նախընտրում է կարդալ տպագիր:

Հ. Հ.



# Ո՞ր սցենարն էր

*1-ին էջից*

**Բազմաթիվ այլ առիթներ են եղել, այդ թվում՝ 2012 թվականի բյուջեի կատարողականը, երբ մեծամասնությունը համերաշխ հակահարված է տվել քննադատողներին: Թե ինչ պատահեց, որ իշխանության մեջ ներքին լարումները հատկապես տեսանելի եղան խորհրդարանում, ՎՊ հաշվետվությունը քննարկելիս՝ սա ողջ վերլուծական արեալի հոգսն է դարձել այս քանի օրը, ու հնչում են ամենատարբեր կարծիքներ (որոշ իմաստով՝ այդ վերլուծություններում եւս հրահրող, դրդող շեշտադրումներ կան):**

**Մի մասի կարծիքով դա շոու է՝ որպես ժողովրդավարության ցուցափեղկի ձեւավորում ու նախագահ Սարգսյանի եվրոպական այցերի համար մեջքի ամրապնդում: Ուրիշները կարծում են, որ, որ ոչ, այնուամենայնիվ, կառավարության ու վարչապետի դեմ կազմակերպվող արշավ է: Երրորդների կարծիքով՝ Ազգային ժողովի նախագահին ու իր շրջապատն են նախաձեռնողականություն դրսեւորում՝ իրենց քաղաքական կշիռն ամրապնդելով:**

**Գոյության իրավունք ունի նաեւ այն քիչ շոշափված տեսակետը, թե սա պլանավորված ինքնահոս է, ինչպես բնության մեջ, մրցակցությունը պետք է բերի բնական ընտրության, որքան էլ դաժան թվա դա:**

**Վերջինը կարող է թույլ տրվել այնքան, որքան մտադրվել է թույլ տվողը, ով վերջապես այս բանավեճի ժամանակ կորոշի՝ ո՞վ է ունակը, ճշմարտացին եւ հեռանկարայինը: Եվ վերջակետ կդնի գզվռտոցին՝ իր համար եզրահանգումներ անելով: Ու ամենից անվտանգ առիթը ջրերը պարզելու, ըստ պլանավորողի, կարող էր լինել ՎՊ բավական խիստ հաշվետվության քննարկումը, որը որեւէ հետեւանք չի ունենում Ազգային ժողովում, քանի որ չի հետեւում քվեարկությունը, եւ այն ընդունվում է ի գիտություն: Սակայն տեղի ունեցած բուռն քննարկման բարոյական հետեւանքներն ու շատ պատգամավորների թաքնված մտքերի բացահայտումները, երեւում է, այնքան էլ լավ հաշվարկված չէին, քանի որ դրանք հավանաբար նախատեսվածից հախուռն ստացվեցին, իսկ ԱԺ նախագահի՝ հաշվետվությունը դատախազություն ուղարկելու պահանջը, առավել թվում է, որ հազիվ թե համաձայնեցված լինի: Ի դեպ՝ այդպիսի առիթները կարող են շատանալ, արդեն իսկ մի շարք բացահայտումներ կառավարության ուղղությամբ վկայում են այդ մասին. ասենք՝ Իրանից Հայաստան ներկրվող գազի ծավալների իրանյան եւ հայաստանյան թվերի անհամապատասխանության փաստը, ավելի վաղ՝ օֆշորային սկանդալը վարչապետի շուրջը՝ թեկուզեւ Աշոտ Սուքիասյանի հերքումով, բայց այն ժամանակ արդեն, երբ սկանդալի ջինը շշից դուրս էր հոսել: Ու հավանաբար չպետք է բացառել առջեւում նոր սկանդալները մի եւ հակադարձ ուղղություններով:**

**Թե ինչու ՎՊ-ի՝ բյուջեի 700 միլիարդ դրամի ռիսկայնության մասին հաղորդումը Ազգային ժողովի որոշ ելույթներում անվանվեց թալան եւ մսխում՝ ընդհուպ ԱԺ նախագահի, շարժառիթն այդպես էլ մնաց ենթադրությունների մակարդակում: Եվ թե ինչու վարչապետը կառավարության նիստին այդքան կոշտացավ, դրա պատասխանն էլ հավանաբար այդ ելույթների (ԱԺ նախագահի ելույթն էլ հետը), կարելի է ասել՝ անսպասելի դեմոնտիվատորներում պետք է փնտրել, քանի որ դրանց մի մասը հատկապես ուղղորդված էին թվում: Մինչդեռ նախորդ անգամներն էլ ՎՊ նախագահը միշտ մեծ չափերի խախտումների պատկեր ներկայացրել է, բայց մեծամասնությունը դահլիճում իրեն զուսպ է պահել ու այդպես չի հարձակվել կառավարության վրա: Ի՞նչ է փոխվել, ուրեմն: Այն է, ինչ թվում էր վաղուց՝ մեծամասնության ներսում երկու թեւերի մրցակցությո՞ւն է, իսկապես, որն ուժգնանում-թուլանում է տարբերաբար եւ կլուծվի միայն այն դեպքում, երբ մեկը տարրալուծի մյուսին: Դա՞ է արտածվել կառավարությանն եւ վարչապետին ուղղված քննադատության մեջ: Արդյո՞ք տեխնոկրատներով, արեւմտյան կրթությամբ մի քանի նոր մասնագետով հագեցած եւ ժամանակակից աշխարհի մոտեցումները որդեգրած կառավարությանը քննադատելով՝ փորձ է արվում սեփական խնդիրները լուծելու, թե, այնուամենայնիվ, մյուս երկու սցենարներից (ժողովրդավարության շղարշի ապահովում, կամ որ էլ ավելի անհավանական է թվում՝ կոռուպցիայի դեմ իրական պայքար) ո՞ր մեկն է աշխատել, դեռ հստակ պնդել հնարավոր չէ: Բայց որ կառավարությանն ու վարչապետին ուղղված հարվածը վաղօրոք պատրաստվել էր, ու վաղուց էր մտածված՝ օգտագործել ՎՊ հաշվետվության պահը, ու դրան կառավարությունն այնքան էլ չէր սպասում, դա՝ հաստատ: Պատահական չէ, որ կառավարության ներկայացուցիչները մեղմի մեջ էին ընդդիմախոսում դահլիճում, այսինքն՝ նրանք այդ աստիճանի հարձակման պատրաստ չէին (խոսքը ոչ թե ՎՊ հաշվետվության, այլ նրանից հետո հնչած ելույթների մասին է), իսկ ահա վարչապետն էլ, որ էլի հավանաբար հատկապես մեծամասնության ակտիվ արձագանքին չէր սպասում, հաշվետվությունից երկու օր հետո միայն կառավարության նիստին կոշտացավ: Փորձված վերլուծաբանները նկատել էին վարչապետի ասած՝ «երբեւիցե» բառը (պետական միջոցները երբեւիցե մսխածները պատասխան են տալու) եւ դրան նախորդած բացահայտումները Մխչյան գյուղի քվոտային բենզինի բաշխման հետ կապված: Այսինքն՝ ԱԺ-ում ամեն ինչ սովորական ընթացակարգով չի ընթացել, ուժեղ ու զարմացած մեծամասնականներին դուրս տվող է եղել: Ու որ ՎՊ նախագահն էլ չէր սպասում այդ աստիճանի ակտիվ արիշվերիշի, երեւաց անգամ նրա եզրափակիչ ելույթից՝ հնչած եռօրյա քննարկումներից հետո, որտեղ նա, արդեն զգացած լինելով, որ հաշվետվությունը մարդիկ կարողացան քաղաքական նկատառումներով օգտագործել, իրեն սահմանազատեց այդ բոլորից, թե՝ որտե՞ղ եք տեսել հաշվետվության մեջ գրած համատարած թալան, կամ որտեղ կա քաղաքական ենթատեքստ: Այնպես որ՝ վարչապետի կոշտ արձագանքից հետո տարածված ՎՊ հայտարարության բովանդակությունը նույնն էր, ինչ Ի. Զաքարյանը հնչեցրել էր հաշվետվության քննարկման ավարտին: Ուրեմն, կարելի է ասել, վարչապետի ասածը ուղղված է ոչ այնքան ՎՊ-ին, որքան իրեն քննադատողներին, ու նրանք բոլորովին էլ ընդդիմությունից չեն, այլ մեծամասնության ներսի վառ ընդդիմախոսները:**

**Իսկ թե ով է հաղթելու՝ որոշելու է մի մարդ, եւ դուք բոլորդ էլ գիտեք, թե ով:**

**Այսքանը միայն՝ ենթադրությունների մակարդակով, որոնցից այնքան էլ հասկանալի չէ, թե այդ բոլորի հետ ի՞նչ հույսեր կարող է կապել հասարակ քաղաքացին:**

# Խարդախության զոհեր

Քարոլին Բաղումյանն ամերիկահայ բժիշկ-ատամնաբույժ է: Նա վաղուց երազել է հաստատվել Հայաստանում եւ ցանկացել, որ իր դուստրը մեծանա հայրենիքում:

2005 թվականին Քարոլին Բաղումյանը գնել է հողամաս Երեւանի Նորք-Մարաշի 13 փողոցում ու այնտեղ սկսել կառուցել իր առանձնատունը: Նա Երեւան ժամանել է 2004-ին, մինչ այդ արդեն համացանցի միջոցով բնակարան է վարձած եղել: Տան բանալին նրան փոխանցել է Նունուֆար Հովհաննիսյանը, որն ասել է, թե շինարար է, ունի շինարարական խումբ ու կարող է Քարոլին Բաղումյանին օգնել Հայաստանում մշտապես բնակություն հաստատելու հարցում: Արդեն 2005-ին



*Քարոլին Բաղումյանի կիսակառույց սենյակներից մեկը*

## Դատական խարդախությունների կծիկում



*«Շինարար» Նունուֆար Հովհաննիսյանը*

հողամաս գնելու ու առանձնատուն կառուցելու գործողությունները կատարել է Քարոլին Բաղումյանի լիազորած Նունուֆար Հովհաննիսյանը, իսկ այդ ընթացքում տիկին Բաղումյանն ապրել է Միացյալ Նահանգներում եւ այցելել Հայաստան երբեմն ու մի քանի օրով: Սակայն գումարային բոլոր վճարումները՝ հողի գնման, շինարարության ու բանվորների վարձատրման համար կատարել է բանկով, ու մի փոքր մասն էլ կատարել է առձեռն, եւ ունի վճարումների բոլոր կտրոններն ու ստացականները: Քարոլին Բաղումյանի պատմությանն անդրադարձել է նաեւ Hetq.am-ը, որից բառացիորեն մեջբերում ենք մի հատված. «Նունուֆար Հովհաննիսյանի հետ պայմանավորվեցինք, որ իմ միջոցներով պետք է գնի հողամաս եւ դրա վրա կառուցի առանձնատուն: Նրան փոխանցեցի համապատասխան ձեւի ու բովանդակության լիազորագրեր, որ իմ փոխարեն կատարեր գործարքներ: Ընդհանուր վերցրած՝ բանկային փոխանցումներով եւ կանխիկ, Նունուֆարին տվել եմ 539 հազար դոլար (բոլոր փաստաթղթերը կան, եւ նա չի հերքում, որ այդքան գումար է ստացել)», պատմել է Քարոլին Բաղումյանը: 2005 թվականին Նորքի 13 փողոցում Նունուֆար Հովհաննիսյանը 45 հազար դոլարով 550 քմ հողամաս է գնել (ավելի ուշ պարզվել է, որ հողամասի իրական գինը 38 հազար է եղել-հեղ.) եւ սկսել առանձնատան շինարարությունը:

Սակայն տան շինարարությունը ձգձգվել է մինչեւ 2009 թվականը, այդ ժամանակ էլ գալով Երեւան՝ Քարոլին Բաղումյանը տեսել է, որ 5 տարվա մեջ կառուցվել է հազիվ մի կիսակառույց շինություն: Իսկ Նունուֆար Հովհաննիսյանը նրանից տարիներով գումարներ է պահանջել առանձնատունը վերջնական տեսքի բերելու համար: Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողի վարչության պետի գրության համաձայն՝ տեղատեսությամբ պարզվել է, որ կիսակառույցում առկա են նախագծային շեղումներ: Իսկ շենքը, ըստ 2010-ի դեկտեմբերին կատարված գնահատման, արժե 114 միլիոն դրամ, այսինքն՝ շուրջ 200 հազար դոլարով պակաս գումար է ներդրվել դրա վրա, քան Քարոլինը հատկացրել է Նունուֆար Հովհաննիսյանին: Պարզվել է նաեւ, որ Նունուֆարը շինարարական գործունեություն ծավալելու լիցենզիա չի ունեցել, հաշվապահություն չի վարել ու շինաշխատանքներ կատարելիս որեւէ մեկի հետ համապատասխան պայմանագրեր չի կնքել:

Հասկանալով, որ խաբված է, Քարոլին Բաղումյանը դադարեցրել է իր հարաբերությունները Ն. Հովհաննիսյանի հետ, եւ ինչպես տիկին Բաղումյանն է ասում, այստեղից էլ սկսվել է իր կյանքի մղձավանջային շրջանը. «Նունուֆարն օգտվելով հայերենի իմ վատ իմացությունից, ՀՀ օրենքները չիմանալուց եւ ամենացավալի փաստից՝ հային հավատալու հանգամանքից, ինձ ներքաշել է դատական մի քաշքշուկի մեջ, ինչից չեմ կարողանում ոչինչ հասկանալ: Եվ հիմա ստացվել է այնպես, որ ես պարտք եմ Ն. Հովհաննիսյանին՝ իբրեւ անհիմն հարստություն, եւ իմ ողջ ունեցվածքը՝ հող, տուն, մեքենա, լրիվ գրավ է դրված, եւ ես սնանկացած, զրկված իմ վաստակած գումարով Հայաստանում տուն ունենալու եւ ապրելու երազանքից՝ պիտի լքեմ Հայաստանը»: Ի դեպ, Նունուֆար Հովհաննիսյանը մինչ տիկին Քարոլինի դեմ դատարան դիմելը Տերյան 65 հասցեի 12 բնակարանը, որը պատկանում է հենց իրեն, գրանցել է ուրիշ անձի անունով, բայց հիմա բնակվում է հենց նույն բնակարանում:



*Կիսակառույցից մեկ այլ պատկեր*

Նունուֆար Հովհաննիսյանը, դիմելով դատարան, պահանջել է հօգուտ իրեն տիկին Քարոլինից բռնագանձել 40 հազար դոլար ու սրան էլ գումարել համապատասխան տույժ-տուգանքի տոկոսագումարը:

Ըստ Hetq.am-ի՝ Կենտրոն ու Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատավոր Էդիկ Ավետիսյանը դատարանում Քարոլինին հարցրել է՝ ընդունո՞ւմ ես: «Նիստի ձայնագրությունը կա. 5 անգամ ասում եմ՝ ոչ, ոչ...Բայց դատավորը «պեչատում է», որ ես համաձայն եմ, հաշտության համաձայնագիրն իր որոշմանը չի էլ կցում (ինչն օրենքով պարտավոր է) եւ իմ փոխարեն որոշում է, որ հաշտությանը համաձայն եմ», պատմել է Քարոլին Բաղումյանը: Ոչինչ չեն փոխել նաեւ Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանները: Ի դեպ, Նունուֆար Հովհաննիսյանը դատավոր Գայանե Կարախանյանի հորաքրոջ աղջիկն է, ինչն էլ հեշտացրել է կաշառքով եւ ծանոթ-բարեկամների միջոցով դատական հարցերը հօգուտ իրեն լուծելու գործը:

Ըստ տիկին Քարոլինի փաստաբանի՝ ոստիկանությունը հետաքննություն է սկսել: Տիկին Քարոլինը դիմել է նաեւ սփյուռքի ու արդարադատության նախարարներին, սակայն ոչինչ չի փոխվել, իսկ նախագահականից պատասխանել են, որ տիկին Քարոլինի՝ իրենց ուղղված դիմումը մակագրվել է գլխավոր դատախազություն:

Հայտնվելով խաբեբայությունների, կեղծարարությունների շղթայում՝ տիկին Քարոլինը մեր անկատար իրավական համակարգից փոխանակ պաշտպանություն ստանալու, տեսել է հակառակ մոտեցումը ու հիմա սեփական հայրենիքում հայտնվել մոլորության մեջ: Տիկին Քարոլինը արդեն մի անգամ բաց նամակով դիմել է հանրապետության նախագահին, նամակում ասում է. «Չեմ ուզում արժանանալ այն սփյուռքահայերի բախտին, որոնք այստեղ որոշ խաբեբաների հանդիպելուց հետո լքել են հայրենիքը՝ այլեւս չուզենալով լսել նրա մասին: Ես համագործակցում եմ ԱՄՆ-ի բժիշկ իմ գործընկերների հետ, եւ ունենք մեծ ծրագիր օգնելու հայ հիվանդ մանուկներին: Սակայն մի քանի խաբեբաներ դրդում են, որ հրաժարվեմ նաեւ բարեգործական այս ծրագրից»:

Քարոլին Բաղումյանը միակ սփյուռքահայը չէ, որն ուզում է ապրել հայրենիքում, ուզում է իր աշխատանքն ու ավանդը դնել ոչ թե ուրիշ երկրի զարգացման մեջ, այլ՝ հայրենիքի, սակայն իրավական ու գերատեսչական մարմինների անտարբեր, մարդկային հոգեբանության հանդեպ անտարբեր ու հայրենիքի բարօրությամբ, տվյալ դեպքում, կարող ենք ասել, բացարձակապես չհետաքրքրված վերաբերմունքը ոչ միայն չի դրդում հայրենադարձության, այլեւ դրդում է արտագաղթի: Եվ Քարոլինի հետ պատահածը, ժողովրդի լեզվով ասած, «խաբող ու քցող» վերաբերմունքը ցույց են տալիս, որ հաճախ իր երկրում հայ մարդն անպաշտպան է, մարդն իր շահերը չի կարողանում պաշտպանել օրենքով: Ու նույնիսկ օրենքի պաշտպաններն են արհամարհում օրենքն ու իրենց դիմած քաղաքացիներին, որոնք օրենքով պաշտպանվելու կարիք ու հայրենիքում ապրելու ցանկություն ունեն:

Այնուամենայնիվ, տիկին Քարոլինը, ի տարբերություն շատ սփյուռքահայերի, թեեւ հուսահատված, բայց շարունակում է պայքարել իր հայրենիքում ապրելու եւ հայ զավակ դաստիարակելու համար: Եվ արդարության հույսով ու վստահությամբ նա իր երկրորդ նամակն է ուղղում հանրապետության նախագահին: Կից ներկայացնում ենք նախագահին ուղղված նրա երկրորդ նամակը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### *Մեծարգո պրն նախագահ*

**Գրում եմ Ձեզ կրկին: 2011 թվի հուլիսին Ձեզ էի ուղարկել մի բաց նամակ, որը Դուք հինգ օր անց ուղարկեցիք քրեական հետաքննության: Շնորհակալ եմ, որ Դուք անմիջապես, շատ արագ արձագանքեցիք իմ նամակին:**

**Երկու տարի է անցել այդ օրվանից, եւ ես շատ բան եմ իմացել Հայաստանում գործող դատական համակարգի մասին, որտեղ որոշումները հիմնված են ոչ թե տրամաբանության, փաստերի եւ ապացույցների, այլ այն անձի վրա, ով ամենաշատն է վճարում ուղղակիորեն Վճռաբեկ դատարանի գլխավոր դատավորներին: Այդ պատճառով էլ իմ բոլոր փաստաթղթերը հանձնելուց եւ անցած չորս տարիների ընթացքում դատարան ներկայանալուց հետո ես կորցրել եմ յուրաքանչյուր դատ, դրանք փաստերի հիման վրա չեն անցկացվել, այլ այն 150 հազար դոլարի վրա, որ Վճռաբեկ դատարանի դատավորները ստացել են Նունուֆար Հովհաննիսյանից, զարմուհին դատավոր Գայանե Կարախանյանի, ով, ի դեպ, փակեց Ձեր կողմից քրեական հետաքննության ուղարկված վերոնշյալ գործը:**

**Հայաստանում ես ապրում եմ կիսավարտ մի շենքում: Ներկայումս իմ ներդրումներից գրեթե ամեն ինչ կորցնելու եզրին եմ, քանի որ, ինչպես նշեցի, դատական համակարգը առձեռն փողի վրա է հիմնված եւ ոչ թե փաստերի ու ապացույցների:**

**Ես ուղղակի աղաչում եմ Ձեզ, պրն նախագահ: Ոչ մի սխալ բան չեմ կատարել: Պարզապես սիրտս ու հոգիս ներդրել եմ Հայաստանին եւ Հայաստանի համար:**

**Մի՞թե սփյուռքի նախարարության հայրենիք վերադառնալու կոչը դրա համար է, որ օրը ցերեկով մարդկանց ոգեզրկեն, անհույս ու անզոր վիճակում թողնեն: Բարի եղեք ընթերցել «Հետքի» բացահայտումները հետեւյալ կայքէջում. «http://hetq.am/arm/articles/17088/diaspora-odyssey-come-home-so-we-can-cheat-you html»:**

**Ես նաեւ դիմել եմ Եվրոդատարան (2013 թվի հունվարի 3-ին), քանի որ չեմ հավատում, որ կաշառք տալով կարելի է հարցեր լուծել, մանավանդ որ ոչ մի սխալ բան չեմ կատարել: Նույնիսկ խոսել եմ Երեւանի իրավաբանական ֆակուլտետի դեկանի եւ արեւելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանի հետ, որին Դուք շատ լավ եք ճանաչում: Նա ինձ ասաց, որ ես նույն ճանապարհն եմ անցնում, ինչ Քարոլին Նաջարյանը: Ինչպե՞ս լուծում տալ թնջուկին՝ հարցրեցի, խորհուրդ տվեց մի անգամ եւս գրել Ձեզ:**

**Այժմ գրում եմ՝ Ձեզ աղաչելով, որ իմ դեմ եղած գործերի վճիռները վերանայեք՝ պարզելու համար, որ դրանք անօրինական են, անտրամաբանական եւ կաշառակերության հետեւանք:**

**Ես Հայաստանում ներդրել եմ 539 հազար դոլար եւ փոխարենը ձեռք բերել ընդամենը անավարտ մի շենք: Բայց որովհետեւ իմ փողերը Նունուֆար Հովհաննիսյանի ձեռքերում են, նա դրանց մի մասը բաժանելով կարողանում է իմ դեմ դատավճիռներ կայացնել տալ:**

**Խնդրում եմ դուրս բերեք ինձ այս անախորժ խառնավիճակից եւ քննության առեք այն փաստը, որ այս դատավորները վերահսկելի չեն, թվում է, թե նրանք ավելի շատ իշխանություն ունեն, քան որեւէ այլ պետական գերատեսչություն:**

**Ես վերջապես ցանկանում եմ անել այն, ինչի համար եկել եմ Հայաստան, որն է՝ ապրել իմ ժողովրդի հետ, ստեղծել աշխատատեղեր, եւ ամենակարեւորը՝ այնպես անել, որ դուստրս հայ մնա, քանի որ շատ լավ գիտեք, որ սպիտակ ցեղասպանությունը դեռեւս շարունակվում է:**

Հարգանքով՝

ՔԱՐՈԼԻՆ ԲԱՂՈՒՄՅԱՆ

# Դաղստանի հարավը Բաքուն է կառավարում

***Դաղստանի հարավային մասը արդեն գրեթե լիովին կառավարվում է Բաքվից, այլ ոչ թե Մոսկվայից եւ Մախաչկալայից: Տվյալ իրավիճակը սպառնում է արդեն ոչ միայն լեզգիների՝ որպես ժողովրդի գոյատեւմանը, այլեւ ամբողջ ռուսական պետության ազգային անվտանգությանը:***

***Տեղի տալով դաղստանյան ուղղությամբ Բաքվի զավթողականությանը՝ Ռուսաստանը կարող է շուտով կորցնել իր սահմանները պաշտպանող եւ տարածքային ամբողջականությունը պահպանող ինքնիշխան տերության լիարժեք կարգավիճակը: Այդ աղետի ծավալների ու պատճառների, ինչպես նաեւ տվյալ սպառնալիքներին դիմակայելու եղանակների մասին է լրագրող Մագոմեդ Աբդուլաեւի հարցազրույցը Դաշնային լեզգիական ազգամշակութային ինքնավարության (ԴԼԾԽԸ) նախագահ Արիֆ Քերիմովի հետ: Նյութը ներկայացնում ենք որոշ կրճատումներով:***

**- Արիֆ Փաշաեւիչ, ինչպե՞ս կբացատրեք Դաղստանի իրադարձությունները Դերբենդի կենտրոնական փողոցի անվանափոխության կապակցությամբ:**

- Բնակչությունը համակված է դժգոհությամբ, որն ահագնանում է: Եվ դա զարմանալի չէ: Մարդկանց մեծամասնությունը շատ լավ պատկերացնում է, թե ով էր Հեյդար Ալիեւը եւ որքան վնաս է պատճառել լեզգիներին եւ դաղստանյան մյուս ժողովուրդներին: Նրա կառավարման օրոք եւ հիմա էլ՝ նրա որդու օրոք լեզգիները ոչ մի լավ բան չեն տեսել, միայն խտրականության են ենթարկվել իշխանությունների բոլոր մակարդակներով:

Ավելին, Բաքուն չէր թաքցնում իր հավակնությունները Դերբենդի եւ ամբողջ Հարավային Դաղստանի նկատմամբ: Դա տեղի էր ունենում դեռ խորհրդային ժամանակներում: Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանի իշխանությունները եւ հասարակական կազմակերպությունները բացեիբաց ասում են, թե տվյալ շրջանը ադրբեջանական տարածք է: Դաղստանի եւ Ռուսաստանի իշխանությունները բնավ չեն հակազդում նրանց անպաշտպան պնդումներին:

Հատկապես զայրացուցիչ են «Ազերռոսի» ղեկավարության սադրիչ ելույթները: «Ազերռոսի» ավագների խորհրդի անդամ Ռուստամ Արիֆջանովն ասել է, թե Դերբենդը ադրբեջանական քաղաք է, քանի որ հիմնել են այդ հողերի վաղեմի բնակիչ ադրբեջանցիները: Իսկ «Ազերռոսի» ղեկավար Աբբաս Աբբասովը նշել է, թե «Դերբենդը մի ժամանակ եղել է Ադրբեջանի մասը»: Այդ պնդումները ծայրեծայր ստահոդ են, ազգամիջյան թշնամանք են սերմանում եւ առիթ են ստեղծում Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը խախտելու համար:

Աբբասովը 14 տարի զբաղեցրել է Ադրբեջանի փոխվարչապետի պաշտոնը՝ ըստ էության հանդիսանալով Հեյդար Ալիեւի աջ ձեռքը: Նա զբաղվում էր ազգային հարցերով, ուստի մեղավոր է լեզգիների, ավարների, թալիշների եւ այդ երկրի մյուս բնիկ ժողովուրդների ներկա վիճակի համար:

Լեզգիներն այլեւս մտադիր չեն հանդուրժել ադրբեջանցի պաշտոնյաների նմանօրինակ գործողությունները: Լեզգիների ազգային ինքնագիտակցության վերելք է նկատվում ամբողջ Ռուսաստանում: Անցկացվում են բողոքի հանրահավաքներ:

Հունիսի 29-ին տեղի կունենա համառուսաստանյան ակցիա: Մեզ համար սկզբունքային պահ է բռնակալ Հեյդար Ալիեւի պատվին Դերբենդի փողոցի վերանվանակոչության չեղարկումը:

**- Դուք մասնակցելո՞ւ եք հանրահավաքին:**

- Այո, անպայման: Մենք մշտապես լսում ենք Ռուսաստանի եւ Ադրբեջանի բարեկամական հարաբերությունների մասին: Դա ասում են բարձրաստիճան պաշտոնական անձինք:

Այդ պաշտոնյաներից շատերի գործունեությունը պետք է մանրակրկիտ ստուգվի համապատասխան ծառայությունների: Փաստորեն նրանք օտարերկրյա գործակալներ են եւ աչք են փակում Բաքվի հակառուսական ձեռնարկումների եւ Ադրբեջանում մեր հայրենակիցների հանդեպ խտրականության վրա:

Ադրբեջանը վաղուց «սահում է» ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իսրայելի կողմը, որոնց հետ ռազմական ու տնտեսական համագործակցությունը ակնհայտորեն վնասում է Ռուսաստանին: Սակայն մենք դեռ խոսում ենք բարեկամության մասին:

Ադրբեջանում ոչնչացվում է լեզգի ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը: Բաքվում գտնվող 12-րդ դարի նշանավոր Լեզգի մզկիթը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում է, վերանվանվել է Աշուրբեկի մզկիթ: Ամեն ինչ արվում է լեզգի ժողովրդի պատմական հետքը ջնջելու համար:

Ոստիկանները փակեցին Խուխ-Ուբեի դպրոցը եւ բնակիչներին արտաքսեցին: Նույնը տեղի ունեցավ Ուրյան-Ուբեում:

Բաքուն վերահսկում է Դաղստանի իրավիճակը եւ միջամտում կադրային նշանակումներին: Հատկապես Դաղստանում առավել արդյունավետ է գործում Ադրբեջանի «խավիարային դիվանագիտությունը»:

Ժողովրդական ժողովի պատգամավորները եւ Դաղստանի կադրային կորպուսը չարձագանքեցին նույնիսկ վերջերս Դոկուզփարայի շրջանում սահմանի վերաձեւմանը եւ 2,5 հազար հեկտար հողերի կորստյանը:

Ներկայումս աշխատանքային խորհրդակցություններ են անցկացվում տեղանքում Ադրբեջանի հետ անմիջական սահմանագծման նպատակով: Վերջերս մի այդպիսի խորհրդակցություն անցկացվեց Մոսկվայում: Դաղստանի սահմանամերձ շրջանների միակ ներկայացուցիչը Դոկուզփարայի շրջանի ղեկավար Քերիմխան Աբասովն էր: Ի պատասխան նրա այն հարցի, թե «այսուհետեւ մարդիկ ինչպե՞ս են ապրելու», ՌԴ ԱԳՆ ԱՊՀ 4-րդ վարչության ղեկավար, ռուս-ադրբեջանական սահմանագծման համատեղ հանձնաժողովում ռուսական պատվիրակության ղեկավար Վադիմ Պոստնովն ասել է, որ «ամեն ինչ արդեն որոշված է»:

Իսկ ո՞վ է որոշել: Դոկուզփարայի շրջանի եւ Ադրբեջանի սահմանագծման ժամանակ ինչո՞ւ այդ շրջանի ներկայացուցիչն այնտեղ չի եղել: Ինչո՞ւ են անտեսվում տեղաբնակները:

Բաքվի լոբբին արդեն կառավարում է գրեթե ամբողջ Դաղստանը, իսկ Հարավային Դաղստանը նրանք առհասարակ պատրաստ են դնել իրենց գրպանը: Մենք պետք է ազատվենք մեր գոյության հիմքերին սպառնացող նման ծավալապաշտությունից:

**- Ի՞նչ պետք է անել իրավիճակը փոխելու համար:**

- Մենք երբեք չենք համակերպվի եւ կպայքարենք նախագահ Դ. Մեդվեդեւի օրոք Ռուսաստանի եւ Ադրբեջանի կնքած նվաստացուցիչ սահմանային պայմանագրի դեմ:

Ադրբեջանին նվիրեցին հսկայական հողատարածքներ, նա ստացավ Սամուրի ջրաբաշխիչ հանգույցը եւ հենց Սամուրի ջուրը, որը գրեթե ամբողջապես ձեւավորվում է Դաղստանի տարածքում:

Գետից եւ հողից բացի՝ Ադրբեջանը ստացավ իր նորագույն պատմության մեջ սահմանների առաջին միջազգային ճանաչումը. սահմանակից պետություններից ոչ մեկը նրան չէր արժանացրել նման պատվի:

Լեզգիների համար կործանիչ այդ պայմանագրի հետեւանքները հետզհետե ավելի զգալի կլինեն: Հարավային Դաղստանում ամեն կարգի տեղական պետերը օտարացել են բնակչության կյանքից եւ հոգսերից:

Տարածաշրջանը դառնում է անկայուն, եւ դժվար է կանխատեսումներ անել: Մենք պետք է վճռականորեն պայքարենք պաշտոնյաների զիջումների դեմ: Համերաշխությունը պետք է ծավալվի, թեւաթափ լինել չի կարելի:

**- Ուրեմն Ադրբեջանի մակարդակով դժվար է լուծել լեզգիների բազմաթիվ խնդիրները, եւ անհրաժեշտ է միջազգային կառույցների ներգրավո՞ւմը:**

- Այո: Այդ պատճառով ԴԼԾԽԸ-ն հատկապես կարեւորում է միջազգային հասարակական կազմակերպությունների հետ փոխգործողությունը, կապեր է հաստատում ՄԱԿ-ի եւ Եվրախորհրդարանի հետ: Եվրոպան տեղեկանում է Ադրբեջանում լեզգիական հարցի գոյությանը:

Մենք Չներկայացված ժողովուրդների կազմակերպության (ՉԺԿ) հետ մեկտեղ պատրաստեցինք Ադրբեջանին նվիրված այլընտրանքային զեկույց, որը ՄԱԿ-ի նստաշրջաններից մեկում ընդունվեց հենց ադրբեջանական կողմի զեկույցի փոխարեն:

Մոտ ժամանակներս մեր պատվիրակությունը Հարավային Տիրոլում կմասնակցի Եվրոպական ազգերի ֆեդերալիստական միության համագումարին: Մտադիր ենք ծանոթանալ ազգային փոքրամասնությունների ինքնակազմակերպման ձեւերին, տարածքային ինքնավարություն ստանալու փորձին:

Միջազգային իրավունքի եւ առավել ազդեցիկ միջազգային կազմակերպությունների հեղինակության վրա հիմնվելով՝ ուզում ենք պայքարել խտրականության եւ կամայականության դեմ: Մտադիր ենք Ադրբեջանում ձեռք բերել այն իրավունքները, որ ունեն Եվրոպայի ազգային փոքրամասնությունները: Պետք է այնպես անենք, որ լեզգիական հարցը դրվի համաշխարհային ընկերակցության օրակարգում:

Ռուս. թարգմ. Պ. Ք.

ԲԵՅՐՈՒԹ

# Ավելի քան 1 մլն սիրիացի փախստականներ Լիբանանում



**Լիբանանի արեւելքում՝ Բեքաայի հովտում ստեղծվել է տագնապալի կացություն: «Բժիշկներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության համակարգող Տանյա Միորենը «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում պատմում է, որ ՄԱԿ-ի փախստականների բարձրագույն կոմիսարիատի տվյալներով, Լիբանանում հայտնված սիրիացի փախստականների թիվը պաշտոնապես530 հազար է, բայց իրականում Լիբանանի իշխանությունները հաղորդում են երկիր մտած ավելի քան 1 մլն փախստականների մասին: Եվ սա այն դեպքում, երբ լիբանանցիների թիվը 4 միլիոն է: Վիճակագրությունը վկայում է, որ ամեն շաբաթ Բեքաայի հովիտ է մուտք գործում 800 ընտանիք:**

**Սրան պետք է ավելացնել Սիրիայի գաղթակայաններից Լիբանան եկած մոտ 80 հազար պաղեստինցիներին, ինչպես նաեւ տարիներ առաջ Սիրիայում հաստատված եւ պատերազմի պատճառով հայրենիք վերադարձած մոտ 49 հազար լիբանանցիներին: Պատահական չէ, որ փոքրիկ Լիբանանն արդեն շնչահեղձ է լինում փախստականների նորանոր ալիքներ ընդունելու անկարողությունից, եւ արտաքին օգնությունը պարզապես դարձել է անհրաժեշտություն:**

**Նոր փախստականների համար ճամբարներ չկան: Լիբանանի տարբեր գաղթակայաններում տասնամյակներ շարունակ ապրում են ավելի քան 450 հազար պաղեստինցի փախստականներ, նշում է «Ֆիգարոն»: Երկրի իշխանությունները վախենում են, որ սիրիացիների համար նոր ճամբարների ստեղծումը կարող է հետեւանքներ ունենալ քաղաքականության եւ անվտանգության առումներով: Առհասարակ լիբանանցիները շատ բարյացակամ են, բայց փախստականների ընդունման հնարավորությունները սպառվել են: Բացի դրանից, նոր եւ էժան աշխատուժը կարող է տնտեսական ու սոցիալական լարվածության պատճառ դառնալ:**

**Ինչ վերաբերում է իրադարձությունների հետագա ընթացքին, լավատեսության հիմքեր առայժմ չկան, քանզի երկրի հնարավորությունները սահմանափակ են, եւ մեկ սենյակում փախստականների մի քանի ընտանիք է կուտակվում: Չնայած բոլոր ջանքերին՝ անհնար է հոգալ նրանց բոլոր կարիքները: Օրինակ, Փախստականների բարձրագույն կոմիսարիատը անցյալում կարողանում էր ապահովել փախստականների տեղավորման ծախսերի 85 տոկոսը, իսկ այժմ ապահովվում է հազիվ 75 տոկոսը: Սա նշանակում է, որ փախստականների բուժսպասարկումը եւ մյուս հոգսերը հետզհետե ավելի են բարդանալու:**

# Իսրայելի գլխավոր ռաբբին կալանավորված է




**Իսրայելում կալանավորվել է երկու քահանայապետներից մեկը՝ աշքենազիների գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը: «Ջերուսալեմ փոստ» թերթը հաղորդում է, որ նրան կասկածում են կաշառակերության, խարդախության եւ փողերի լվացման մեջ: Ոստիկանությունը 10 ժամ տեւած հարցաքննությունից հետո տնային կալանքի է ենթարկել Մեցգերին: Նույն գործով ձերբակալվել են նրա երեք ենթադրյալ հանցակիցներ, այդ թվում՝ անձնական վարորդը:**

**Խուզարկությունների ժամանակ ռաբբիի տնից եւ գրասենյակից առգրավվել են համակարգիչներ եւ փաստաթղթեր: Ոստիկանությունում կարծում են, որ կասկածյալները հափշտակել են բարեգործական մի քանի հիմնադրամների միջոցներ: Պատճառված վնասը գնահատվում է տասնյակհազարավոր դոլարներ:**

**Մեցգերը ձերբակալվել է իր լիազորությունների տասնամյա ժամկետի ավարտից ընդամենը մի քանի շաբաթ առաջ: Աշքենազիների գլխավոր ռաբբիի առաջիկա ընտրություններում հավանական հաղթողը Դավիթ Լաուն է:**

**Արդեն 2005-ին Մեցգերի նկատմամբ գործ էր հարուցվել կաշառակերության եւ խարդախության մեղադրանքներով, սակայն մեկ տարի անց գործը կարճվել էր երկրի գլխավոր դատախազ Մենահեմ Մազուզի անձնական կարգադրությամբ:**

**Առաջին անգամը չէ, որ Իսրայելի իշխանությունները մեղադրանք են ներկայացնում կրոնական գործիչներին: 2012-ի վերջերին խարդախության մեջ կասկածել էին երկրի սեֆարդների գլխավոր ռաբբի Էլիյահու Բակշի-Դորոնին: Քննության նյութերի համաձայն, նա զինվորներին եւ ոստիկաններին հանձնել էր ռաբբիական կեղծ փաստաթղթեր, որոնք երաշխավորում էին նրանց ռոճիկների էական հավելավճարներ:**

Պ. Ք.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

# «Ոսկե ծիրան»՝ Շառլ Ազնավուրից մինչեւ Քշիշտոֆ Զանուսի

«Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնը համագործակցում է ՀՀ դեսպանությունների հետ, որի կապակցությամբ երեկ տեղի ունեցավ մամուլի ասուլիս:

Ֆրանսիական համագործակցության էջի-կենտրոնը լեգենդար շանսոնիե Շառլ Ազնավուրի ներկայությունն է փառատոնին եւ նրա դերակատարմամբ ֆիլմերի՝ Ֆրանսուա Տրյուֆոյի «Կրակել դաշնակահարի վրա», Դընիս դը լա Պատելյիեի «Թոբրուկ գնացող տաքսին» եւ Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմերի ներկայացումը «Հետահայաց ցուցադրություններ» ծրագրում:

Ֆրանսիայի դեսպանության հետ համագործակցության արդյունքում ֆրանսիացի մի քանի անվանի կինոգործիչներ կմասնակցեն այս տարի փառատոնին՝ մասնավորապես որպես ժյուրիի անդամ՝ կինոգործիչ Սերժ Ավեդիքյանը, կինոքննադատ Ժան Ռադվանին եւ պրոդյուսեր Էդիտա Յանչակ-Հիրիարտը: Իսկ ֆրանսիական արտադրության «Երկու հոգու միջեւ» վավերագրականը կներկայացնի ֆիլմի հեղինակը՝ Լորանս Պերիգոն: Մրցութային ծրագրում ընդգրկված են նաեւ ֆրանսիական համատեղ արտադրությամբ ստեղծված «Տարվա հինգերորդ եղանակը» խաղարկայինը, «Լեւիաթան» վավերագրականը, «Փեսուրի խրոնիկա» կարճամետրաժը, որը կներկայացնի ռեժիսորը՝ Աքսել Լաթնադան, իսկ ֆրանսահայ ռեժիսոր Առնո Խայաջանյանը՝ իր «Կորած հորիզոնները»: Իսկ արտամրցութային ծրագրի Հետահայաց ցուցադրություններ բաժնում կներկայացվի Ուլրիխ Զայդլի ֆրանսիական համատեղ արտադրությամբ ստեղծված եռապատումը:

Լեհական համագործակցության շրջանակներում փառատոնին կհյուրընկալվի հռչակավոր կինոռեժիսոր Քշիշտոֆ Զանուսին: Իսկ ահա Լեհաստանի դեսպանության եւ Լեհաստանի կինոինստիտուտի հետ համատեղ համագործակցությամբ հուլիսի 8-ին կիրականացվի լեհական կինոյի օրը, որի շրջանակում կցուցադրվի Անտոնի Կրաուզեի «Սեւ հինգշաբթի» խաղարկայինը: Մաչեյ Ադամեկը կմասնակցի փառատոնին եւ կներկայացնի իր «Լուսանկարը» ֆիլմը, որն ընդգրկված է միջազգային խաղարկային ծրագրում:

Գերմանիայի դեսպանության եւ Թբիլիսիի Գյոթե ինստիտուտի համագործակցությամբ փառատոնի ծրագրում՝ հուլիսի 9-ին, տեղի կունենա գերմանական կինոյի օր, որ կնշանավորվի Մարգարետ ֆոն Տրոտտայի Հաննա Արենդտ (Hannah Arendt) ֆիլմի ցուցադրությամբ եւ ֆոն Տրոտտային՝ համաշխարհային կինոյում ունեցած վաստակի համար «Փարաջանովյան թալեր» մրցանակի հանձնումով: «Կորիզ» կարճամետրաժ ֆիլմերի մրցույթում կներկայացվեն Միկի Նեդիմովիչի «Dva», Էրիկ Շմիդթի «Rhino Full Throttle», Էլմար Իմանովի «The Swing of the Coffin Maker» գերմանական արտադրության եւ Էնգին Կունդակի «Արարատ» թուրք-գերմանական ու Էլկա Պապիաշվիլու «Աղջիկը Գորիից» գերմանա-վրացական համատեղ արտադրությունները:

Կարեւոր է նշել, որ Գյոթե ինստիտուտի աջակցությամբ հնարավոր է դարձել նաեւ մի քանի գերմանացի պրոդյուսերների մասնակցության ապահովումը «Ռեժիսորներ առանց սահմանների» 7-րդ համատեղ արտադրության ֆորումին, ինչը հնարավորություն կտա տարածաշրջանային սկսնակ կինոգործիչներին խորհրդատվություն ստանալ նրանցից:

ԱՄՆ դեսպանության հետ համագործակցության շնորհիվ ամերիկացի հռչակավոր կինոռեժիսոր Գոդֆրի Ռեջիոյի հյուրընկալվի փառատոնին, որը կանցկացնի նաեւ վարպետության դաս:

Կարեւոր է նշել, որ ԱՄՆ դեսպանությունը մասնակիորեն ֆինանսավորել է նաեւ Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմի (ՀՊՖՆ) իրականացումը: ՀՊՖՆ-ի նպատակն է խթանել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ համատեղ ֆիլմերի ստեղծումը:

ՀՊՖՆ-ի շրջանակներում ստեղծվել է 11 ֆիլմ՝ կարճամետրաժ եւ վավերագրական, տեղի է ունեցել ավելի քան 100 փոխադարձ այց, թողարկվել է հայ եւ թուրք երիտասարդ կինոգործիչների կողմից ստեղծված 5 կարճամետրաժ եւ վավերագրական ֆիլմերի ժողովածու-սկավառակ:

ԱՄՆ կինոգործիչներ Ջեյ Վայսբերգը եւ Դեյվիդ դ՛Արսին կընդգրկվեն համապատասխանաբար միջազգային խաղարկային եւ Հայկական համայնապատկեր մրցույթների ժյուրիի կազմերում: Մրցութային ծրագրի համապատասխան բաժիններում կներկայացվեն Սթիվ Հուվերի «Արյունակից եղբայրը» վավերագրականը, Լիսան Սարտորի «Six Letter Word» կարճամետրաժը եւ Ալեքսանդր Տավիտիան-Միրեցկու «All Together Now» խաղարկայինը՝ բոլորն ամերիկյան արտադրության:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ներքին ձայնի նկարիչը

## Հարություն Կալենց. «Գույնը ձեւի մեջ»



Ցուցահանդեսի բացմանը չհասցրի (ճանաչողները կասեն, ինչպես՝ սովորաբար), Կասկադի ներքնասանդուղքների վերին հարկում արդեն հերթապահ հսկիչը չի թողնում բարձրանալ՝ հրավիրատոմս չեմ վերցրել, ինքնահաստատող մի թուղթ էլ չկա: Միակը՝ թերթի օրվա համարն է պայուսակումս, որ ցույց եմ տալիս, ու մարդը ժպտում է, թե՝ անցի: Հյուրերն արդեն ցրվում են, այստիպի ցուցահանդեսներին մասնակից գրեթե նույն մարդիկ, արվեստագետ-նկարիչներ հիմնականում, արվեստասեր տիկնայք, մի մասը ցած է իջնում, մյուսները բարձրանում են վերին հարթակ՝ շարունակելու օրվա գեղեցկության վայելքը:

Ցուցասրահի էլեկտրական լուսավորությունը առաջին պահին կեսգիշերային լապտերների խորհրդավոր միջավայր-շղարշ է ստեղծում: Լույսի «խաբկանքը» միանգամից փոխում է զգացողական վիճակը՝ իրականությունից ոչինչ չի մնում. այս մի 30 րոպեն անցնում է իռացիոնալ աշխարհում՝ թողնելով երանության թեթեւությունը: Որովհետեւ աչքերիդ մեջ արթնանում է գույնը. գույնը, որի թափանցիկության գաղտնիքը միայն իրեն՝ նկարչին է հայտնի:

Կալենցյան գունափիլիսոփայության, ավելի շուտ գունաընկալման, գունաարտահայտման այն հատվածը, որ ներկայացված է Գաֆեսճյան կենտրոնի այս սրահում («Արծիվ»), անվանված է «Գույնը ձեւի մեջ»: Արդեն ժամեր անց, հաջորդ օրվա լույսը բացվելուն պես՝ պատուհանից ասես կախվում է կանաչ-թափանցիկ օդի վարագույրը՝ նկարչական տարազով անշուշտ: Գիշերվա, քնի ու գույնի խառնուրդը, ավելի շուտ դրանց հանդիպման առաջին մտապատկերը, որ «երեւաց», Կալենցի հրաշալի նկարն էր՝ վերնագրված «Գիշերը մեր բակում», նկար, որ հայացքիդ մի հպումից անգամ խոհի ու զգացողության այնպիսի ալիք է բարձրացնում, որ երկար դժվար թե մոռացվի: Կտավին քսված գույնը՝ գիշերվա գույնի մեջ արթնացած կանաչի՝ փարթամ բույսի կենսականություն է բուրում, ճոճաթոռին կիսատ մնացած ապրումը, միտքն ու հուշը մարդկային կյանքի մի գեղեցիկ պատմություն է հյուսում, որտեղ մթության՝ տեղ-տեղ հայտնված նուրբ ֆոնը թախծի անասելի տրամադրություն է բերում, իսկ մենակ մնացած ճոճաթոռը շարունակում է օրորել կյանքի երազը՝ օրվա ճիշտ պահին: (Որովհետեւ երազները մեզ այցելում են հենց գիշերները...): Այս գործը ինձ թվում է նկարչի ներքին աշխարհի, ներքին կյանքի, իր վիճակի ու ապրումների հայելի-արտացոլանք, թեեւ իրեն բախտ չեմ ունեցել ճանաչելու, սակայն բավական է վերհիշել-վերընթերցել Կարպիս Սուրենյանի օրագրության հատվածի այս նկարագրությունը. «... Դեռ հինգ տարեկան երեխա, հենց Եղեռնի դժոխքով է անցել հոր զոհվելուց հետո: Եղել է աքսորականների քարավանում մոր ու եղբայրների հետ, ինքը՝ էշի մի կողմում արկղի մեջ, մյուս կողմի արկղում ավելի փոքր եղբայրը: Կոտորածի ժամանակ մայրը պատառոտել է երեխաների հագուստները, արյուն քսել երեխաներին, որպեսզի վիրավորվածի տեսք ստանան, փախել-բարձրացել են բլրի վրա ու թաքնվել ժայռերի հետեւում, վերջապես հրաշքով փրկվել է նա, հիշողության մեջ զարհուրելի պատկերներ տպավորված:

... Իսկ հետո՝ հայրենաբաղձ մղումով ներգաղթ եւ... ավա՜ղ, հայրենադարձի հավելյալ տարօրինակ ճակատագիր, բռնատիրական սարսափի տակ երկրորդ սորտի անվստահելի քաղաքացու նվաստացած վիճակ տարիներով (գոնե լավ է, որ Սիբիր չի աքսորվել շատերի նման) ու մանավանդ իր «ֆորմալիստական» անընդունելի տաղանդի անտեսում ի վերուստ:

Եվ սակայն ծաղկում է տաղանդը բնատուր անկասելի աճով, գնահատվում կողմնակիորեն միայն ու հիացմունքով»:

Մեծարենցյան գիշերերգյան արբշիռ հիացմունքն արթնացնող կալենցյան այս պատկերը որքան գնում ներսումդ խորացնում է տրամադրություններն ու անխուսափելիորեն կիսատ մնացող կյանքի կարոտի զգացումը: Շարունակում եմ կարդալ Սուրենյանի այն նկարագրությունը, երբ Կալենցի մոտ հայրենադարձ ընկերները կիրակնօրյա մերթընդմերթ հավաքներ էին ունենում, ինչպես ինքն է գրում. «Բլուր» կամ «ախպարաշեն» թաղամասի «հայրենադարձների շինած մշտապես կիսատ-պռատ, մշտապես աշխատանք պահանջող տան բակում, ամռան շոգին, ծիրանիների տակ»: «... Կալենցը լռում էր հանկարծ, խոժոռվում, ասես հեռանում իր հուշերի մեջ, աչքերը խոր տխրությամբ լցված: Գուցե ա՞յն էր վերապրում, թե ինչպես ֆրանսիացի ականավոր տարեց նկարչի հետ ամիսներով թափառեց Մերձավոր Արեւելքում ու նկարեց, նկարեց, եւ տարեց նկարիչը այնպե՜ս էր գնահատում, որդու նման սիրում էր իրեն: Կամ էլ ա՞յն, որ իր երկերը Լիբանանի կողմից պետականորեն Նյու Յորք ուղարկվեցին միջազգային ցուցահանդեսին եւ մրցանակի արժանացան, իրեն լայն ճանաչում բերելով արդեն: Կամ էլ գուցե հիշում էր իր տո՞ւնը Բեյրութում ծովափի ժայռերի վրա, ծովի փոթորկումները, երբ տունը ցնցելով թնդում էին գունագեղ ալիքները, բախվելով գունագեղ ժայռերին... Եվ հանկարծ նա զարթնում էր հուշերից»...

Այդ զարթնումը, արթնացումը գունային այն ողջ տրամադրությունները չե՞ն արդյոք, որ նկարիչն այսպես քնարականորեն փոխադրել-փոխանցել է կտավի մակերեսներին: Այլապես ինչու նրա գրեթե բոլոր նկարներում՝ որքան էլ գունային կենսունակությանը, կանաչ-կապույտ-դեղինի առատությանը, ներկա է միշտ թախծի այդ նույն տրամադրությունը, պայծառ թախիծի, որոնց մեջ գուցե միջերկրածովյան ալիքների գունագեղ հիշողություննե՞րն են, կամ առհասարակ արտիստիկ էությանը բնորոշ ներքին երազի ու կյանքի անհամատեղելիության կեղեքող ապրումը, եւ՝ գիտակցումը նոր իրականություն ստեղծելու անհրաժեշտության: Եվ որն էլ հենց դառնում է այդպիսիների փրկության ելքը: Այսինքն՝ ստեղծագործումը, երբ իրականության չկոչված վիճակներն ու իղձերը սկսում են ապրել կտավի տարածքում, բառի ներսում, հնչյունի խորքում: Ու մեզ է մնում դրանց վայելքը՝ երաժշտության, նկարների, գրքերի տեսքով: Դրանց հետեւում ինքը՝ արվեստագետն է, հոգու՝ մեզ անտեսանելի մերկությամբ, դառնությամբ, երբեմն էլ անհուսությամբ: Ու ահա Հարություն Կալենցի կտավները խոսում են այս ճշմարտության մասին, հնչում մեղեդային ու այնքա՜ն քնարական: Թվում է՝ դահլիճը, այսինքն՝ տարածությունը կալենցյան կանաչից հագեցած է, գունային ծավալումները շատ են ու տարածուն, սակայն զարմանալին՝ երբեք չհագեցնող, մի տեսակ անավարտություն կամ շարունակականություն, չասված խոսքի խորհրդավորություն կա գունամտածողության այս խորքերում:



«Բերքահավաք»

Նկարիչը գույնը այնքան թափանցիկությամբ, փխրունությամբ ու թեթեւությամբ է օծել-համակել, որ կտավը երբեք «չծանրաբեռնվի»՝ որքան էլ բնության ծավալուն պատկեր ընդգրկի («Աշունը Երեւանի շրջակայքում», «Բերքահավաք», «Հրազդանի ափին»): Այսինքն՝ ընկալվի բնական, ինչպես բնությունն ինքը, որքան՝ հարուստ, նույնքան չպարտադրող, ինքնագո:

Եվ հակառակը՝ այդ գույնը թթվածնի պես քիչ է միշտ թվում, անդադար անհրաժեշտ, ինչպես կյանքի հանդեպ մարդու կարոտն է, թթվածնային քաղցի պես: Ու ստեղծվում են զարմանալի այս կանաչները, օդասուն տարածությունների թարմություն բուրող, կտավի մակերեսները շնչառու դարձնող այս ծավալումները, կա-



«Գիշերը մեր բակում»

րեւոր չէ՝ դիմանկար է կտավին, բնանկար, թե նատյուրմորտ: Այստեղ ձեւը ուրվագիծ է միայն, պայմանականություն, նշան. խորքից ծնվում է պատկերի էությունը, վերացարկումը, հետո՝ գույնը, եւ գույնը տիրապետող կամ գերիշխող չէ: Բնավ: Բայց խորապես լրացնում է, նա ստեղծում է միջավայրը՝ զգայական ու խոհական այն մտասեւեռումների, որ իր մեջ կրում է նկարիչը: («Մտորում», «Դանակներով դիմանկար» ինքնադիմանկարների շարքը):

Հարություն Կալենցի գեղանկարչական ձիրքը բնատուր է, գեղագիտական ընկալումները խիստ անհատական վերապրումների արդյունք են, նա բնական ձայնի ու խորքի նկարիչ է, եւ իր ստեղծագործությունը գեղարվեստական խոհուն փորձի արգասիք է, որտեղ արվեստագետը անվերապահորեն տրվել է աշխարհի գեղեցկության ընկալման ներքին ձայնի ճշմարիտ վերարտահայտմանը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

***Հ. Գ.*** *- «Գաֆեսճյան» կենտրոնի «Գույնը ձեւի մեջ» ցուցադրությունը ընտրանի է «Կալենց» թանգարանի հավաքածույից: Նատյուրմորտ, բնանկար եւ դիմանկար աշխատանքները նկարչի ստեղծագործական փնտրտուքների 60-ականների՝ իր անհատական ձեռագրի հասուն շրջանը ներկայացնող գործերից են:*

*Ցուցադրությունն ընդգրկում է նաեւ նկարչի գրաֆիկական աշխատանքների մի շարք: Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ հունիսի 20-ին, երեւանյան մտավորական ընտրանու ներկայությամբ, ելույթ ունեցան նկարչի որդին՝ Սարո Կալենցը, «Գաֆեսճյան» արվեստի կենտրոնի գործադիր տնօրենի պաշտոնակատար Վահագն Մարաբյանը:*

# Մարզական

## Արաս Օզբիլիս. «Հաճելի է, որ դանիացիների նկատմամբ հաղթանակում նաեւ իմ ներդրումը կար»



***Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսն արձակուրդից հետո միացել է Կրասնոդարի «Կուբանի» իր խաղընկերներին, որոնք ուսումնամարզական հավաք են անցկացնում Ավստրիայում: Արասը հարցազրույց է տվել ակումբի պաշտոնական կայքին:***

**- Արաս, ինչպե՞ս հասար Բադ-Տացմաննդորֆ:**

- Ամստերդամից մեկնեցի Վիեննա, որտեղ ինձ դիմավորեցին ակումբի ներկայացուցիչները: Ընթրիքին արդեն հյուրանոցում էի: Հաճելի է կրկին գտնվել այն մարդկանց շրջապատում, ում հետ հիանալի մրցաշրջան անցկացրինք: Այժմ պատրաստվում ենք նոր մրցաշրջանին, որում հույս ունեմ, որ ավելի հաջող հանդես կգանք:

**- Արձակուրդդ որտե՞ղ անցկացրիր:**

- Ընտանիքիս հետ մնացինք Ամստերդամում: Նույնիսկ չէի ծրագրել որեւէ տեղ մեկնել, քանի որ ժամանակը քիչ էր:

**- Քեզ երկրպագում էինք Հայաստանի հավաքականի հանդիպումների ժամանակ: Հայերը 2 անգամ զարմացրին բոլորին, նախ տանը պարտվեցին Մալթային, ապա հյուրընկալվելիս ջախջախեցին Դանիային:**

- Պատասխանս յուրօրինակ չէ. սա ֆուտբոլ է: Մալթայի հավաքականն արագ գոլ խփեց ու պահպանեց հաղթական հաշիվը՝ ամբողջ թիմով հուսալիորեն պաշտպանվելով: Իսկ մենք ոչ մի կերպ չէինք կարողանում գնդակն ուղարկել մրցակցի դարպասը: Նման բան պատահում է նույնիսկ ավելի տիտղոսակիր թիմերի հետ: Փոխարենը Կոպենհագենում շատ համախմբված հանդես եկանք: Դաշտի տերերը թերեւս մինչեւ հանդիպումն իրենց հաշվին արդեն 3 միավոր էին գրանցել: Հաճելի է, որ հաղթանակում նաեւ իմ ներդրումը կար: Ճիշտ է, Մալթայի հավաքականի հետ խաղում ձախողվեցինք: Սակայն այսօր Հայաստանի հավաքականն ունակ է ուժեղ մրցակիցներին հաղթելու:

**- «Կուբանի» զբաղեցրած 5-րդ տեղը ՌԴ առաջնությունում հանգամանքների հաջող դասավորման արդյո՞ւնք է:**

- Ես այդպես չեմ կարծում: Ավելի շուտ մենք միավորներ կորցրինք, քան հավաքեցինք: Շատերն այն կարծիքին էին, որ առաջնության գարնանային հատվածում «Կուբանի» համար խաղացանկն անհաջող է կազմված: Եվ ի՞նչ. մենք այդ փուլում ոչ մի պարտություն չկրեցինք:

**- Նախապատրաստական շրջանում թիմի մի քանի ֆուտբոլիստներ հեռացան «Կուբանից»: Որքանո՞վ դա կազդի թիմի ելույթների վրա:**

- Մշտապես ափսոսում ես, որ թիմից հեռանում են ֆուտբոլիստներ, որոնց հետ հաջողության ես հասել: Սակայն ֆուտբոլում դա անխուսափելի է: Կորուստները նվազագույնն են, բացի այդ պահեստայինների թվում կան ուժեղ ֆուտբոլիստներ:

**- Այս տարի «Կուբանը» մասնակցելու է նաեւ եվրոգավաթների խաղարկությանը: Նշանակում է, որ հարկավոր է պայքարել մի քանի ֆրոնտով:**

- Այդ հարցը բոլոր թիմերն էլ պետք է լուծեն: «Կուբանը» ներկայումս առաջադիմում է եւ վստահ եմ, որ հիմնախնդիրները հաջողությամբ կլուծվեն:

**- Ի՞նչ ակնկալիքներ ունես մրցաշրջան 2013/14-ից:**

- Նույնը, ինչ որ «Կուբանի» ֆուտբոլասերները: Սպասում եմ նոր հաղթանակներ եւ թիմային նոր ռեկորդների գրանցում:

## Իսպանացիները չխնայեցին Թաիթիի հավաքականին



Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականը Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկության խմբային մրցաշարի 2-րդ խաղում 10-0 հաշվով պարզապես ջախջախեց Թաիթիի ֆուտբոլիստներին՝ արդյունավետության նոր ռեկորդ սահմանելով այս մրցաշարի համար: Նախկինում ամենախոշոր հաշիվը 8-0-ն էր: Թաիթիի հավաքականը կրկնեց իր տխուր ռեկորդը: 2004-ին Թաիթիի ֆուտբոլիստները 0-10 հաշվով զիջել էին Նոր Զելանդիայի ընտրանուն: Իսկ իսպանացիներն ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնել էին 1933-ի մայիսի 21-ին Բուլղարիայի հավաքականի հետ կայացած ընկերական խաղում, որում 13 անպատասխան գնդակ էին խփել մրցակցի դարպասը: Այդ խաղում իսպանացի Չաչոն 6 գոլի հեղինակ էր դարձել:

Թաիթիի հավաքականի հետ խաղի հերոսը Ֆեռնանդո Տորեսն էր, որը ֆուտբոլային պոկեր ձեւակերպեց՝ չորս անգամ գրավելով մրցակցի դարպասը: Հեթ-տրիկի հեղինակ դարձավ Իսպանիայի հավաքականի բոլոր տարիների լավագույն ռմբարկու Դավիթ Վիլյան, որն իր գոլերի քանակը հասցրեց 57-ի: Տորեսի հաշվին 31 գոլ է գրանցված:

Իսպանիայի հավաքականը ժամկետից շուտ նվաճեց կիսաեզրափակիչի ուղեգիրը: Գործնականում պայքարը շարունակելու իրավունք է ստացել նաեւ Ուրուգվայի հավաքականը, որը նիգերիացիներին 2-1 հաշվով հաղթելով, հավասարվեց վերջինիս: Խմբային մրցաշարի վերջին խաղում ուրուգվայցիները մրցելու են Թաիթիի հավաքականի հետ, որի նկատմամբ հաղթանակը կապահովի կիսաեզրափակիչի ուղեգիրը:

Նիգերիացիների հետ խաղում հաղթական գոլի հեղինակ դարձած Դիեգո Ֆոռլանը, որն ի դեպ հավաքականում հոբելյանական՝ 100-րդ հանդիպումն անցկացրեց, դարձավ ռեկորդակիր: Նա 34 գնդակով գլխավորեց Ուրուգվայի հավաքականի բոլոր տարիների լավագույն ռմբարկուների ցուցակը՝ շրջանցելով Լուիս Սուարեսին, որը մեկ գոլ պակաս է խփել:

## Քերոլը հեռացավ «Լիվերպուլից»

«Լիվերպուլի» հարձակվող Էնդի Քերոլը 6 տարվա պայմանագիր է կնքել անգլիական մեկ այլ ակումբի՝ «Վեստ Հեմի» հետ: Նրա տեղափոխության դիմաց «Լիվերպուլը» կստանա 15 մլն ֆունտ ստեռլինգ: Նշենք, որ 2011-ին Քերոլին «Նյուքասլից» գնելու համար «Լիվերպուլը» 35 մլն ֆունտ ստեռլինգ էր վճարել:

Ավելի վաղ բրիտանական լրատվամիջոցները տեղեկացրել էին, որ Քերոլին «Լիվերպուլը» վաճառելու է 17,5 մլն ֆունտ ստեռլինգով եւ այդ գումարն օգտագործելու է 22 մլն ֆունտ ստեռլինգով Մխիթարյանին գնելու համար:

### ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

## Մխիթարյանի տեղափոխությունը «Լիվերպուլ» վտանգված է

Հենրիխ Մխիթարյանի տեղափոխությունը «Լիվերպուլ» հավանաբար չկայանա: Ըստ բրիտանական Mirror-ի, հունիսի 21-ին Հենրիխ Մխիթարյանը պետք է բուժզննում անցներ «Լիվերպուլում», սակայն դա տեղի չի ունենա: Այդ օրը բուժզննում կանցնի միայն «Սեւիլիայի» 20-ամյա հարձակվող Լուիս Ալբերտոն, որը կդառնա Բրենդան Ռոջերսի թիմի հերթական նորեկը: Թերթի կարծիքով, տրանսֆերային գործարքը կարող է ձախողվել, քանի որ ՀՀ հավաքականի ֆուտբոլիստի տրանսֆերային իրավունքների միայն 50 տոկոսն է պատկանում «Շախտյորին»:

Sports.ru-ն էլ նշել է, որ ակումբները չեն համաձայնվում տրանսֆերային գումարի վճարման ժամկետների շուրջ: «Լիվերպուլը» պատրաստ է 20 մլն ֆունտ ստեռլինգը 2 տարում մաս-մաս վճարել, իսկ «Շախտյորը» դրան համաձայն չէ:

Եվ իրոք, «Շախտյորին» այնքան էլ ձեռնտու չէ Մխիթարյանից հրաժարվել առավելագույնը 15 մլն եվրոյի դիմաց (պայմանագրով նշված 30 մլն եվրոյի 50 տոկոսը): Չէ՞ որ Դոնեցկի «Մետալուրգին» հայ ֆուտբոլիստի տեղափոխության դիմաց «Շախտյորը» 7,5 մլն եվրո էր վճարել:

«Շախտյորի» գլխավոր տնօրեն Սերգեյ Պալկինն էլ հայտարարել է, որ ակումբը մերժել է «Լիվերպուլին» եւ Մխիթարյանը հունիսի 23-ին միանալու է թիմակիցներին, որոնք ներկայումս ուսումնամարզական հավաք են անցկացնում Ավստրիայում: Պալկինի խոսքերն ավելի հավաստի են թվում, երբ «Սպորտ Էքսպրեսի» թղթակից Արթուր Պետրոսյանը տեղեկացրեց, որ Մխիթարյանը ոչ թե Լոնդոն է մեկնել, ինչպես երեկ նշել էր PanARMENIAN.Net-ը, այլ «Ավստրիական ավիաուղիներով» մոր եւ քրոջ հետ մեկնել է Վիեննա:

Ինչ խոսք, ցավալի կլինի, եթե գործարքը տեղի չունենա: Դա կարող է հոգեբանական մեծ հարված լինել Մխիթարյանի համար, որը մեծ ցանկություն ունի տեղափոխվելու եվրոպական առաջատար ակումբ: Ուստի չի բացառվում, որ նա «Շախտյորում» ելույթները հարկադրաբար շարունակելու դեպքում նույնպիսի նվիրվածությամբ չգործի:

## Ռոբերտ Հովհաննիսյանը շարունակեց հաղթարշավը



Ջերմուկում ընթացող Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 5-րդ տուրում Ռոբերտ Հովհաննիսյանը նոր հաղթանակ տոնելով Վահե Բաղդասարյանի նկատմամբ, 5 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել աղյուսակը: 4-ական միավորով առաջատարին հետապնդում են Արթուր Չիբուխչյանն ու Զավեն Անդրեասյանը: Արթուրը հաղթեց Հովհաննես Գաբուզյանին, Զավենը պարտության մատնեց Արտաշես Մինասյանին:

Օտարերկրացի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Իսրայելը ներկայացնող Եվգենի Պոստնին, բրազիլացի Ալեքսանդր Ֆիեռը եւ բելառուս Անդրեյ Գորովեցը, որոնք ունեն 3,5-ական միավոր:

## 9-ամյա հայ շախմատիստուհին Շվեյցարիայի չեմպիոնուհի

Armchess.am-ի տեղեկացմամբ 9-ամյա Գոհար Թամրազյանը նվաճել է մինչեւ 12 տարեկանների Շվեյցարիայի շախմատի չեմպիոնուհու կոչումը: Գոհարը 7 հնարավորից վաստակել է 6 միավոր: Նա իր ուժերն է չափել նաեւ տարիքով ավելի մեծ՝ մինչեւ 16 տարեկան շախմատիստուհիների մրցաշարում, որտեղ գրավել է մրցանակային 3-րդ տեղը: Նա ընդամենը կես միավոր է զիջել չեմպիոնուհու տիտղոսը նվաճած Լենա Գեորգեսկուին:

## Կվիճարկվի Ռաֆայել Վահանյանի անվան գավաթը

Սեպտեմբերի 22-26-ը Երեւանում կանցկացվի շախմատի համալսարանական թիմերի միջազգային բաց մրցաշար, որում կխաղարկվի հայ անվանի գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանի անվան գավաթը: Մրցաշարի կազմակերպիչը Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանն է: Այս մասին տեղեկացնում է Armchess.am-ը:

## Նախապատրաստվում են Եվրոպայի առաջնությանը

Հուլիսի 4-8-ը Սկոպիեում կայանալիք Եվրոպայի երիտասարդական առաջնությանն են նախապատրաստվում Հայաստանի ազատ ոճի երիտասարդական հավաքականի անդամները: Նրանք օրերս ավարտել են ուսումնամարզական հավաքը Ծաղկաձորում: Հունիսի 24-ին հավաքականն իր վերջին հավաքը կանցկացնի Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադահլիճում, որից հետո կմեկնի մրցավայր:

Հավաքականի գլխավոր մարզիչ Ավետիք Գրիգորյանն արդեն կողմնորոշվել է թիմի կազմի հարցում: Մրցագորգ դուրս կգան Խորեն Թեմուրյանը (50 կգ), Արտակ Հովհաննիսյանը (55 կգ), Գոռ Թորոսյանը (60 կգ), Արեն Ալեքյանը (66 կգ), Գեւորգ Համբարձումյանը (74 կգ), Շամիր Աթյանը (84 կգ), Վիկտոր Կազիշվիլին (96 կգ) եւ Համլետ Աբրահամյանը (120 կգ):

## Ուժերի փորձարկում

Նոր մրցաշրջանին նախապատրաստվող հայկական ակումբները ստուգողական հանդիպումներ են անցկացնում միմյանց հետ: «Բանանցի» մարզադաշտում մրցել են դաշտի տերերն ու «Փյունիկը»: Գրանցվել է ոչ-ոքի՝ 1-1: «Բանանցից» գոլի հեղինակ է դարձել Անդրանիկ Քոչարյանը, «Փյունիկից» 11մ հարվածն իրացրել է Արտակ Եդիգարյանը:

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում ուժերը չափեցին Կապանի «Գանձասարն» ու բարձրագույն խմբի նորեկ Մարտունու «Ալաշկերտը»: Այս խաղում եւս գրանցվեց ոչ-ոքի՝ 2-2:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Լեհաստանի Սենատը դատապարտեց Ուկրաինայում 1943-ին 100 հազար լեհերի ջարդը

Լեհաստանի Սենատը ընդունել է բանաձեւ Վոլինի կոտորածի՝ 1943 թ. էթնիկական հակամարտության 70-ամյակի կապակցությամբ: Այդ հակամարտության հետեւանքը դարձել էր Վոլինի լեհ բնակչության ոչնչացումը:

«Ազատություն» ռադիոկայանը նշում է, որ բանաձեւում 70-ամյա վաղեմության դեպքերը կոչվում են «էթնիկական զտում՝ ցեղասպանության նշաններով»: Փաստաթղթում ընդգծվում է, որ լեհերի բնաջնջման պատասխանատվությունն ընկնում է ուկրաինացի ազգայնականների կազմակերպության՝ «Ուկրաինայի ապստամբական բանակի» վրա: Դրա մարտիկները հայտնի են նաեւ որպես բանդերականներ:

Բանաձեւում այն պնդումն է արվում, թե բանդերականների լեհ զոհերի թիվը հասնում է մոտ 100 հազարի:

«Լեհերը ձգտում են ուկրաինացիների հետ հաշտության եւ բարեկամության: Ի դեպ, իսկական հաշտությունը կարելի է կառուցել միայն ճշմարտության ու ոճրագործության համատեղ դատապարտման վրա», ընդգծում են բանաձեւի հեղինակները:

Ուկրաինայի «Ազատություն» ազգայնական կուսակցության ներկայացուցիչ Օլեգ Պանկեւիչը իր հերթին հայտարարել է, որ Լեհաստանի իշխանությունները պետք է խոստովանեն «Վիսլա» հանցավոր գործողությունը (լեհական տարածքներից ուկրաինացիների արտաքսումը 1947 թ.): Նրա կարծիքով, Վարշավայում պետք է ընդունեն, որ այդ իրադարձությունները եղել են «ուկրաինացիների էթնոցիդ»:

1920-ականների վերջերին ստեղծված ուկրաինացի ազգայնականների կազմակերպությունը հանդես էր գալիս էթնիկ ուկրաինացիներով բնակեցված տարածքներում միասնական պետության ձեւավորման օգտին: Դրա մարտական թեւը «Ուկրաինայի ապստամբական բանակն» էր: Երկրորդ աշխարհամարտի տարիներին «բանակի» ներկայացուցիչները համագործակցում էին հիտլերականների հետ, «բանակը» գործում էր կարմիրբանակայինների եւ պարտիզանների դեմ, ինչպես նաեւ իրականացնում էր պատժիչ գործողություններ խաղաղ բնակչության դեմ:

# Նոր հրատարակություններ

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Գարեգին Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել 19-րդ դարի 2-րդ կեսի ռուս կրոնական փիլիսոփա **Վլադիմիր Սոլովյովի «Երեք Զրույց»** եւ հարավսլավացի ուղղափառ աստվածաբան **Վեզելին Քեսիչի «Քրիստոսի ավետարանական կերպարը»** աշխատությունները:







Վլադիմիր Սոլովյովի «Երեք Զրույց» գրքի հայերեն թարգմանությունը տարիներ առաջ ստանձնել էր Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսչությունը (2004-2008 թթ.): Այս հրատարակության նպատակը հայ կրոնափիլիսոփայական գիտելիքի հարստացմանը նպաստելը եւ ընթերցողին հայոց լեզվով նոր ու տարաբնույթ մասնագիտական գիտելիքի տրամադրումն է:

Երկը, որը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար, ձգտում է աստվածարդարացման (թեոդիցիայի) ճանապարհով բացատրել անանցական ճշմարտությունները՝ այլափոխված ու աղճատված աշխարհայինի անցականի մեջ, որտեղ խառնված են չարն ու բարին, լույսն ու խավարը, որտեղ դժվար է ճշմարտությունը զատորոշել կեղծիքից: Աստվածարդարացման սոլովյովյան տեսությունը ջանում է ներկա աշխարհի մեջ աստվածայինը տարանջատել աշխարհային կեղծիքով քողարկված աստվածադաս իրականությունից: Աշխատությունը տպագրվել է Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի նախագահ **Կարեն Մկրտչյանի** մեկենասությամբ:

Վեզելին Քեսիչի «Քրիստոսի ավետարանական կերպարը» աշխատության հայերեն թարգմանությունը կատարել է Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: Գիրքը մի նոր ներդրում է հայ ընթերցող հասարակությանը ծանոթացնելու ժամանակակից աստվածաբանական-մեկնողական մտքի հարուստ գանձարանին: Ընթերցողը աշխատության մեջ կարող է գտնել ավետարանական շատ հարցերի պատասխաններ, նորովի կսկսի ընկալել ու ընթերցել Ավետարանը: Աշխատությունը տպագրվել է Մայր աթոռի բարերար Գաբրիել Չեմպերճյանի մեկենասությամբ:

ԲՐՅՈՒՍԵԼ

# Հարավային «գազային...

1-ին էջից

Մասնավորապես, եվրոպացի խորհրդարանականները պահանջել էին անհապաղ ազատ արձակել իրավապաշտպան Իլգար Մամեդովին, որին իշխանությունները ներկայացրել են Իսմայիլիում «զանգվածային անկարգություններ կազմակերպելու եւ ոստիկանի առողջության համար վտանգավոր եղանակով նրան դիմադրություն ցույց տալու» մեղադրանք:

Միլլի մեջլիսի երեկվա արտահերթ նիստում իշխող կուսակցությունից պատգամավոր Խադի Ռաջաբլին Իլգար Մամեդովին անվանել է «օտարերկրյա հատուկ ծառայությունների գործակալ, որը փորձում է Ադրբեջանում «գունավոր» հեղափոխություն անել»: Ռաջաբլին նույնիսկ խորհրդարանի խոսնակ Ասադովին կշտամբել է այն բանի համար, որ «ժամանակին թույլ չի տվել, որ պատգամավորները Մամեդովի դեմ բողոք ուղարկեն գլխավոր դատախազություն»:

Եթե խորհրդարանի ամբիոնից հասարակական գործչի, որ գտնվում է նախնական կալանքի տակ, հասցեին հնչեցրած նման մեղադրանքները «քաղաքական հետապնդում չեն», ապա ինչպե՞ս անվանել դրանք: Հավանաբար, հենց այս հանգամանքն է նկատի ունեցել Եվրոհանձնաժողովի նախագահը, երբ ասել է, որ ԵՄ-ն «չափազանց կարեւորում է մարդու իրավունքները»:

Անշուշտ, դա չէ գլխավոր պատճառը, որ հարավային «գազային միջանցքի» երթուղու հարցում վերջնական որոշում չի ընդունվել: Ինչ-որ հարցերում, հավանական է, կողմերը դեռեւս դիրքորոշումները չեն հստակեցրել: Իլհամ Ալիեւի ձեւակերպումը, որ «դա երկու կողմին էլ ձեռնտու է, քանի որ Ադրբեջանը ձեռք է բերում հուսալի շուկա, իսկ Եվրոպան՝ էներգակիրների այլընտրանքային աղբյուր», կարելի է հասկանալ այնպես, որ Եվրոմիությունը դեռեւս ադրբեջանական «այլընտրանքի աշխարհաքաղաքական կարեւորության» հարցում լիովին համոզված չէ:

Վ. Ա.


«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

*Պռոշյան 2/1, Երեւան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47*
*2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia*
*Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3*

*Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072*
*Հեռ/Tel: (374 10) 229 238*
*Ֆաքս/Fax: (374 10) 229 278*
*www.fintechaudit.am / info@fintechaudit.am*

## Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ-ի մասնակիցներին,***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

***Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն***

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվություն***

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

***17 հունիսի, 2013 թ***
***Անիկ Մարտիրոսյան***
***Տնօրեն-Բաժնետեր***

***Սիլվա Ղազարյան***
***Աուդիտի ղեկավար***

***«Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ Ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2012 թ***

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 15 | 14,742,392 | 10,623,159 |
| Վաճառքի ինքնարժեք | 16 | (7,289,321) | (5,534,533) |
| Համախառն շահույթ | | 7,453,071 | 5,088,626 |
| Այլ եկամուտ | 17 | 2,425,201 | 1,946,492 |
| Իրացման ծախսեր | 18 | (504,103) | (350,797) |
| Վարչական ծախսեր | 19 | (7,113,579) | (4,980,847) |
| Այլ ծախսեր | 20 | (2,886,333) | (1,514,037) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | (625,743) | 189,437 |
| Ֆինանսական եկամուտ, զուտ | 21 | 1,431,737 | 76,746 |
| Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ | 22 | (56,803) | 13,534 |
| Շահույթ մինչեւ հարկերը | | 749,191 | 279,717 |
| Շահութահարկի գծով ծախս | 23 | (23,294) | (128,616) |
| Զուտ շահույթ | | 725,897 | 151,101 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 725,897 | 151,101 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. հունիսի 17-ին՝

***Գործադիր տնօրեն***
***Հրանտ Վարդանյան***

***Գլխավոր հաշվապահ***
***Ռուզաննա Մախմուդյան***

***«Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ Ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2012 թ***

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 5,131,024 | 4,658,667 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 16,405 | 18,145 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 6 | 330 | 330 |
| Տրված փոխառություններ | 7 | 488,842 | 7,286,266 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 109,356 | - |
| Տրված կանխավճարներ | | 30,960 | 55,740 |
| | | 5,776,917 | 12,019,148 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 9 | 20,386,636 | 14,043,039 |
| Առեւտրային եւ այ դեբիտորական պարտքեր | 10 | 1,815,753 | 2,028,915 |
| Տրված փոխառություններ | 7 | 8,220,425 | - |
| Շահութահարկի կանխավճար | | 15,393 | 42,814 |
| Դրամական միջոցներ | 11 | 45,531 | 68,325 |
| | | 30,483,738 | 16,183,093 |
| Ընդամենը ակտիվներ | | 36,260,655 | 28,202,241 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | |
| *Կապիտալ եւ պահուստներ* | | | |
| Կանոնադրական կապիտալ | 12 | 6,000,000 | 6,000,000 |
| Պահուստային կապիտալ | 12 | 1,500,000 | 1,500,000 |
| Կուտակված շահույթ | | 14,664,148 | 13,938,251 |
| | | 22,164,148 | 21,438,251 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Փոխառություններ | 13 | 7,805,862 | 3,643,822 |
| | | 7,805,862 | 3,643,822 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Փոխառություններ | 13 | 1,324,914 | - |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 14 | 4,965,731 | 3,120,168 |
| | | 6,290,645 | 3,120,168 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | 36,260,655 | 28,202,241 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. հունիսի 17-ին՝

***Գործադիր տնօրեն***
***Հրանտ Վարդանյան***

***Գլխավոր հաշվապահ***
***Ռուզաննա Մախմուդյան***


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 21.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: